16 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2011 ՈՒՐԲԱԹ 164(4782)

# Ազգ
Azg

ISSN: 1829-1651

# Միավորման կոչ ռամկավար-ազատական գաղափարակիրներին եւ բոլոր համակիրներին

Օրերս լրանալու է հայ ավանդական կուսակցություններից մեկի՝ Ռամկավար Ազատական կուսակցության ծննդյան 90-ամյա հոբելյանը: Կուսակցություն, որի արմատները սնվում են հեռավոր 1885թ. Վանում ստեղծված Արմենականների անդաստանում, եւ որն արդյունք է վերջիններիս ժառանգորդ Հայ Սահմանադրական Ռամկավար կուսակցության, Վերակազմյալ Հնչակյան եւ մի քանի այլ քաղաքական ուժերի համախմբման:

Ռամկավար Ազատական կուսակցության անցած ամբողջ ուղին մաքառումների, պայքարի, բնավեր եղած սփյուռքահայության բեկորները հավաքելու, համախմբելու, հայեցի սերունդ մեծացնելու, ազգապահպանության, աշխարհի ժողովուրդների շարքում արժանապատիվ քայլելու, նորանկախ Հայաստանի հանրապետությանը բոլոր առումներով սատարելու հանրագումար է:

Այսօր, սակայն, զանազան պատճառներով մի տեսակ աղավաղվել է ռամկավար-ազատական գաղափարախոսությունը, այդ գաղափարախոսության կրողների շարքերը նոսրացել են, իսկ ՌԱ կուսակցությունը խոր ճգնաժամ է ապրում:

Արմենական-ՌԱԿ-ը՝ իրեն համարելով ռամկավար-ազատական (լիբերալ-դեմոկրատական) գաղափարախոսությանը դավանող, ազատականության ջատագով ու ժողովրդավարության նվիրյալ, ինչպես նաեւ Ռամկավար Ազատական կուսակցության հոգեզավակ ու ժառանգորդ, մեծ ցավ է ապրում ՌԱԿ-ում ստեղծված ներկա տխուր վիճակի համար եւ կոչ է անում՝

- ՌԱԿ-ի բոլոր նախկին ու ներկա գործող անդամներին,
- ՌԱԿ-ից ինչ-ինչ պատճառներով հեռացածներին,
- ՌԱԿ-ի շրջանակներից ակամա դուրս մնացածներին,
- Ռամկավար-ազատական գաղափարախոսության բոլոր դավանողներին ու համակիրներին.

մի կողմ թողնել բոլոր օբյեկտիվ ու սուբյեկտիվ պատճառաբանությունները, մոռանալ անձնական վիրավորանքներն ու հավակնությունները (ամբիցիա), աշխարհագրական եւ այլ տարբերությունները, մեկ մարդու նման միանալ մեր նախաձեռնությանը, որն ընդամենը մեկ նպատակ ունի՝ համախմբվել լիբերալ-դեմոկրատական գաղափարախոսության դրոշի ներքո, միասին պայքարել հանուն նրա իդեալների եւ, վերջապես, վերականգնել ռամկավարի, ռամկավար կուսակցության բարի անունն ու համբավը, դառնալ այն հզոր ուժն ու փարոսը, որի շուրջ կհամախմբվի հայությունը ազգանվեր նպատակների իրագործման համար:

ԱՐՄԵՆԱԿԱՆ-ՌԱՄԿԱՎԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

*Խնդրում ենք սույն կոչին ընդառաջ՝ կապ հաստատել ԱՐՄԵՆԱԿԱՆ-ՌԱԿ գրասենյակի հետ (Երեւան, Կորյունի 19ա, 3-րդ հարկ, հեռախոս՝ (010-091-077) 56 68 45, էլ. հասցե՝ offic-rak@armenakan.am), եւ ցանկության դեպքում անհատապես կամ հավաքաբար մաս կազմել նախաձեռնող խմբին՝ վերամիավորման ու միավորման գործընթացն սկսելու նպատակով:*

# Ազգային ժողով կգնա՞ն ջրբաժանի տարբեր կողմերում եղողները



Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը Հայաստանի երրորդ հանրապետության եւ խորհրդարանի 20-ամյակի կապակցությամբ սեպտեմբերի 19-ին ընդունելության է հրավիրում Հայաստանի առաջին գումարման Գերագույն խորհրդի եւ Ազգային ժողովի բոլոր գումարումների պատգամավորներին:

Եթե հաշվենք, ապա ընդհանուր թվով հրավիրյալների թիվը կազմում է 8 հարյուրից ավելի մարդ, քանի որ առաջին գումարման Գերագույն խորհուրդն ուներ 260 պատգամավոր, առաջին գումարման Ազգային ժողովը՝ 190, իսկ երեք գումարում՝ 131-ական: Սա, փաստորեն աննախադեպ հրավեր է, անգամ եթե 500 մարդ ընդունի հրավերն ու գա Ազգային ժողով, իսկ հենց Ազգային ժողով է նրանց հրավիրում նախագահը, ապա անհասկանալի է, թե որտե՞ղ է անցկացվելու այդ ընդունելությունը. ԱԺ նոր դահլիճում տեղերը սահմանափակ են, ԱԺ այլ դահլիճները նույնպես տարողունակ չեն:

Բայց ավելի կարեւոր է, թե ի՞նչ է ասելու այդքան խայտաբղետ պատգամավորական լսարանին Հայաստանի նախագահը: Նկատենք, որ նախկին խորհրդարանների անդամ են եղել Լեւոն Տեր-Պետրոսյանը (ԳԽ նախագահ), Վազգեն Մանուկյանը, Բաբկեն Արարքցյանը (ԳԽ նախագահ), Արմեն Խաչատրյան (ԱԺ նախագահ), Տիգրան Թորոսյանը (ԱԺ նախագահ), Ալբերտ Բազեյանը (ԱԺ փոխնախագահ), Կարապետ Ռուբինյանը (ԳԽ փոխնախագահ), Արթուր Բաղդասարյանը (ԱԺ նախագահ), Խոսրով Հարությունյանը, եւ ուրիշ այնքան շատ մարդիկ, ովքեր հետո տարբեր քաղաքական ճամբարներում են հայտնվել, քննադատել միմյանց, հաճախ միմյանց մասին արտահայտվելիս անցել թույլատրելիի սահմանը: Կուզենա՞ն նրանք բոլորը մի տեղում հայտնվել կամ լսել մի մարդու, ում հետ նույնպես շատերը տարբեր ճամբարներում են: Իսկ թե այսքան տարբեր շրջանակներ ներկայացնող մարդկանց ի՞նչ միացնող կամ ընդհանրական խոսք է ասելու նախագահ Սարգսյանը, կամ ինչ գաղտնիմաս է դրել բոլորի համար պետք է որ ցանկալի եւ սիրելի անկախության տոնի առիթով այս հավաքի մեջ, միայն այդ օրը կիմացվի, եթե, իհարկե, նրա հրավերն ընդունեն հատկապես ջրբաժանի այս ու այն կողմերից, ընդ որում՝ նրանց մեջ կան մարդիկ, ովքեր անընդհատ խոսում են նախագահ Սարգսյանի ոչ լեգիտիմությունից: Նկատի առնելով, որ այս հանդիսության ձեւաչափի մասին ոչինչ չի ասված հրավերում, հեռուն գնացող մեկնաբանություններ , անգամ այն, որ Տեր-Պետրոսյանը կարող է ընդունել հրավերն ու ելույթ ունենալ, առայժմ անել էլի չի կարելի: Ամեն ինչ խոսում է այն մասին, որ նա հրավերը պետք է որ չընդունի, սակայն ամբիոնն օգտագործելու հնարավորությունը գայթակղիչ է:

Ս. Խ.

# Նախարար Օհանյան. բանակում անպատժելիության մթնոլորտ չկա



PHOTOLURE

Բանակում խաղաղ պայմաններում զոհված զինծառայողների ծնողները, քաղաքացիները, ովքեր չեն հանդուրժում բանակի ներկայիս իրավիճակը ու պահանջում են բարեփոխումներ, երեկ կրկին կառավարության շենքի դիմաց էին: Նրանց պահանջը մեկն էր՝ վերացնել բանակում օրեցօր շատացող սպանություններն ու անօրենությունները:

Սեւազգեստ մայրերը, սովորության համաձայն, ձեռքերին պահել էին իրենց սպանված որդիների նկարներն ու պահանջում էին պատասխան՝ ինչո՞ւ են սպանել իրենց որդուն եւ ինչո՞ւ մեղավորը պատասխան չի կրում:

Լսելով նրանց խնդիրները, մարդու իրավունքների պաշտպան **Կարեն Անդրեասյանը** խոստացավ ընդունելություն կազմակերպել իր գրասենյակում, նաեւ հանդիպում՝ բոլոր պաշտպան մարմինների հետ:

«Բանակում անպատժելիության մթնոլորտ չի եղել եւ այսօր էլ չկա», ծնողների հետ հանդիպման ժամանակ հավաստիացրեց ՀՀ պաշտպանության նախարար **Սեյրան Օհանյանը**: Նա վստահեցրեց, որ բոլորն էլ իրենց արժանի պատիժը ստանում են: «Բանակում դեպք հնարավոր չէ թաքցնել: Բոլորն իրավական հարթության վրա պատիժ են ստանում, իսկ եթե քրեական գործի շրջանակներում ներգրավված չեն, ապա ադմինիստրատիվ, կարգապահական տույժեր ստանում են՝ պաշտոններից ազատում, այլ պաշտոնների տեղափոխում, բանակից զորացրում»:

Օհանյանն ասաց, որ բանակում տեղի ունեցող հակաօրինական բոլոր արարքների, երեւույթների վերաբերյալ հարուցված են քրեական գործեր, իրավապահ մարմինները զբաղվում են դրանցով, ու չկա որեւէ դեպք, որի մեղավորների շրջանակը հայտնաբերված չլինի կամ այդ մարդիկ հայտնաբերված ու կալանավորված չլինեն:

«Իսկ ինչու են բանակում խաղաղ պայմաններում այդքան մարդ զոհվում» հարցին էլ նախարարն ասաց, որ տարեցտարի բանակում արտակարգ պատահարների թիվը նվազում է: «Յուրաքանչյուր մարդու կորուստը մեզ համար ցավ է, ողբերգություն, բայց մահվան ելքով պատահարների թիվը նվազում է»:

Օհանյանը խոստովանեց, որ կիսում է բոլոր ծնողների ցավն ու խորհուրդ տվեց համբերությամբ զինվել, մինչեւ իրավապահները գործերը հասցնեն ավարտին: Հ. Հ.

# «Կարողացել ենք ստեղծել իր զինվորին ու ուսուցչին կերակրող տնտեսություն»

Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում երեկ Անկախության 20-ամյակի առիթով հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանը հրավիրել էր ընդունելություն գործարարների համար: Միջոցառմանը մասնակցում էին նաեւ հասարակական ու մշակութային գործիչներ, կառավարության անդամներ, տարբեր գերատեսչությունների ներկայացուցիչներ:

Նախագահը, շնորհավորելով ներկաներին Անկախության 20-ամյակի կապակցությամբ, նշել է, որ սա տոն է, որին ժողովուրդը շատ երկար է սպասել: Երկրի ղեկավարի խոսքով, անկախությունը բերել է իրավունք, կարողություն եւ պատասխանատվություն՝ «մեր դարավոր երազանքը մեր ձեռքերով իրողություն դարձնելու հնարավորություն»: «Չունենալով համեստ բնական պաշարներ, կարողացել ենք ստեղծել տնտեսություն, որը կերակրում ու սպառազինում է իր զինվորին, ապահովում է իր ուսուցչի արժանապատիվ կենցաղը», նշել է Հայաստանի նախագահը:

# 6 միլիոն տուգանք «Հայկական ժամանակին»

Հայրենի դատարանը նախորդ օրը 6 միլիոն 132 հազար դրամի տուգանք է վճռել «Հայկական ժամանակ» օրաթերթի դեմ, գոհացում տալով Ռուբեն Հայրապետյանի, Սամվել Ալեքսանյանի եւ Լեւոն Սարգսյանի դատական հայցին՝ իրենց անձն ու գործարարական համբավը վիրավորելու մեղադրանքով:

Հետագայում առիթ կունենանք անդրադառնալ այս արտառոց պատժաչափի փաստին:

# Ազգային փոքրամասնությունները միջոց են Թուրքիայի կառավարության եւ ԱՄՆ պետքարտուղարության համար

## *Համայնքային կալվածքների մասին հրամանագիրը նրանց տալիս է այդ միջոցը հավասարապես օգտագործելու հնարավորություն*

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ

Նախորդ համարում «Համայնքային կալվածքների առնչությամբ Քլինթոնը ողջունում է Էրդողանին» վերնագրով նշել էինք, որ դա արվել է ԱՄՆ պետքարտուղարության կրոնական ազատությունների մասին զեկուցագրի հրապարակման առնչությամբ: 2010-ի երկրորդ 6-ամյակը ընդգրկող այս զեկուցագրի Թուրքիային վերաբերող հատվածում թեեւ նշվել է կրոնական որոշ խմբավորումների դավանանքի ազատության սահմանափակման մասին, մասնավորապես մատնացույց է արվել, որ առայժմ փակ է մնում հույն հոգեւոր ճեմարանը, այնուամենայնիվ. գոհունակությամբ է արձանագրվել ինչպես Տրապիզոնի Սումելա վանքը, այնպես էլ Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցին ժամերգության բացելու եւ կառավարության հրամանագրով 1936-ից ի վեր առգրավված համայնքային կալվածքները վերադարձնելու առնչությամբ:

Սումելա վանքն ու Սուրբ Խաչ եկեղեցին ունեն թանգարանի կարգավիճակ եւ ժամերգության չեն բացվել: Պարզապես թուրքական իշխանությունները տարվա մեջ մեկ օր այս եկեղեցիներում պատարագ մատուցելու հնարավորություն են տվել սեփական տերերին, իսկ պետքարտուղար Քլինթոնը դա ինքնակամ համարել է կրոնական հանդուրժողականության հերթական դրսեւորում, հայտարարելով. «Օգոստոսին թուրքական կառավարությունն արձակեց մի հրամանագիր, որը նախատեսում է ոչ մահմեդական համայնքներին վերադարձնել 75 տարի առաջ բռնագրավված եկեղեցիներն ու սինագոգները: Հրամանագրով ստանձնած պարտավորությունների համար ողջունում եմ վարչապետ Էրդողանին»:

Տես էջ 5

ԱԶԳ

## Ընթացիկ

# ԱՄՆ պետքարտուղարությունը Հայաստանում «հաշվել է» 6 մլն մարդ

### *Որոնց «90 տոկոսը` Հայ առաքելական եկեղեցու հետեւորդներ»*

Սեպտեմբերի 13-ին ԱՄՆ պետքարտուղարությունը հրապարակել է կրոնական ազատությունների վերաբերյալ կիսամյակային (2010-ի հուլիս-դեկտեմբեր) զեկույցը: Ինչպես փոխանցում է «Ազատություն» ռադիոկայանը` զեկույցում մասնավորապես ասված է. «Հայաստանի սահմանադրությունը պաշտպանում է դավանանքի ազատությունը, սակայն մյուս օրենքները եւ քաղաքականությունը որոշ խտրականություն են դնում կրոնական փոքրամասնությունների անդամների դավանանքի ազատության վրա»: Իհարկե` քննարկման այլ խնդիր է, թե ԱՄՆ-ի ի՞նչ գործն է, թե ում են պաշտպանում կամ խտրականություն կիրառում այլ երկրների, կոնկրետ Հայաստանի օրենքները: Պետքարտուղարության զեկույցը հետաքրքրական է մի շարք առումներով: Նախ եւ թերեւս ամենահատկանշականը. ամերիկյան զեկույցում ասված է. «Հայաստանի բնակչության 90 տոկոսը Հայ առաքելական եկեղեցու հետեւորդներ են. կրոնական մյուս խմբերը փոքր համայնքներ են, որոնց հետեւորդները երկրի բնակչության 5 տոկոսից քիչ են կազմում»:

Օրեր առաջ, ինչպես տեղեկացրել էր «**Ազգը**», կրոնագետ **Ալեքսանդր Ամարյանը** հայտարարեց, որ Հայաստանում այսօր կան «Հայ առաքելական եկեղեցու ոչ հետեւորդ 300 հազար մարդ», ընդ որում Ամարյանը այս 300 հազարի մեջ ներառել էր նաեւ մեր երկրում բնակվող ուղղափառներին, կաթոլիկներին, եզդիներին ու քրդերին, որոնք, գաղտնիք չէ, բավական մեծաթիվ համայնքներ են: Ի՞նչ է ստացվում. ԱՄՆ պետքարտուղարությունը Հայաստանում հաշվել է 6 մլն մա՞րդ. չէ՞ որ հենց այդքան պիտի լինի Հայաստանի բնակչությունը, եթե նրա 5 տոկոսը կազմում է Ամարյանի ներկայացրած 300 հազարը: Մյուս կողմից, հնարավո՞ր է, որ Ամարյանը թիվը չափազանցում է, այդ պարագայում առաջանում է հարց. ո՞վ է շահում ավելի շատ` Ամարյա՞նը` առաքելական եկեղեցու հետեւորդների թիվը չափազանցնելով, թե՞ ԱՄՆ պետքարտուղարությունը` երկրում «կրոնական այլ համայնքների» թիվը կրճատելով:

Ինչեւէ` հաջորդաբար` պետքարտուղարության զեկույցում ասվում է. «Հայաստանի սահմանադրությունը ճանաչում է Հայ առաքելական եկեղեցու բացառիկ առաքելությունը: Առաքելական եկեղեցուն շնորհված է արտոնություններ, ինչը չունեն կրոնական մյուս խմբերը»: Իսկ ի՞նչ է առաջարկում ԱՄՆ պետքարտուղարությունը. որ հավասարեցնենք նոր հայտնված` կասկածելի արմատներով, էլ ավելի կասկածելի նպատակներով կրոնական կազմակերպություններին Առաքելական եկեղեցո՞ւն. այն նույն եկեղեցուն, որը պետական նշանակություն է ունեցել հայերիս համար` դարեր շարունակ, եւ որի հովանու ներքո հայերեն են սովորել բազմաթիվ հայ երեխաներ` աշխարհի տարբեր անկյուններում: Եթե ԱՄՆ-ի պահանջը սա է, ապա ինչո՞ւ, ի՞նչ նպատակով...:

Այնուհետեւ պետքարտուղարությունն անդրադառնում է «հավատացյալ կալանավորների ու ձերբակալվածների կրոնական ազատությունների խախտումներին»` որպես օրինակ բերելով. «Երեւանում «Եհովայի վկաների»-ի առաջնորդն ասել է, որ կրոնական համոզմունքների պատճառով զինվորական կամ այլընտրանքային ծառայությունը մերժող իրենց 73 անդամներ դեկտեմբերի 31-ի դրությամբ մնում են մեկուսարանում»: Բնականաբար հասկանալի է` պետքարտուղարությունը այս` ընդամենը միակողմանի տեղեկությունը ներկայացնում է որպես փաստ: Նախ` ո՞վ ասաց, որ «Եհովայի վկաների» երեւանյան առաջնորդը ճշմարտությունն է ասում, եւ երկրորդ` եթե անգամ այդպես է` իսկ ինչպե՞ս է վարվում ԱՄՆ-ը իր քաղաքացիների հետ, որոնք խախտում են իր իսկ օրենքները առավել եւս սահմանադրական պարտականությունների կատարումից են հրաժարվում:

Ամերիկյան զեկույցը անդրադառնում է նաեւ Երեւանում տեղադրված հայերի ու հրեաների ողբերգության հուշարձանի հրեական մասի` նախորդ տարվա հոկտեմբերի 19-ին պատահած պղծմանը: Այստեղ պետքարտուղարությունը հնարավորինս օբյեկտիվությունը պահպանելու համար մեջբերել է Հայաստանում հրեական համայնքի ղեկավարի խոսքերը. «Հայաստանում հրեական համայնքը միջադեպը չի բնորոշում որպես երկրում հակահրեական մթնոլորտի արդյունք, դա պարզապես «խուլիգանություն» է, որը կարող են կատարած լինել նաեւ օտարահմանցիները»: Եվ վերջում` պետքարտուղարության զեկույցը «տեղեկացնում է». «Հայկական լրատվամիջոցների մեծ մասը, ներառյալ պետականորեն հիմնադրված Հանրային հեռուստաընկերությունը, շարունակում են պիտակել կրոնական փոքրամասնությունների խմբերին` նրանց ներկայացնելով որպես «աղանդների»: Տարբեր հեռուստաընկերություններ շարունակում են քննարկումներ հեռարձակել, որոնց մասնակցող Հայ առաքելական եեղեցու ներկայացուցիչները կամ այլ մասնակիցներ, կրոնական փոքրամասնությունների խմբերին պիտակում են պետության եւ ազգային միասնության դեմ թշնամիներ»: Իսկ, թե ինչո՞ւ են համարվում «կրոնական փոքրամասնությունների խմբերը» Հայաստանում «պետության եւ ազգային միասնության դեմ թշնամիներ», դա արդեն ԱՄՆ պետքարտուղարության որոշելիքը չէ. դրա որոշողը ՀՀ քաղաքացիներն են:

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

# Ղարաբաղյան օղիները` Բաքվում, այն էլ մեծ պահանջարկով

Panorama.am-ի փոխանցմամբ, որն իր հերթին մեջբերում է ադրբեջանական Pia.az ինտերնետային պարբերականին, Մոսկվայում գտնվող Արցախի օղիների վաճառքով զբաղվող ընկերության տնօրեն **Սամվել Համբարձումյանը** հայտնել է, որ ադրբեջանցիները ոչ մեծ քանակով ժամանակ առ ժամանակ գնում են իրենց արտադրանքը: Պարզ պատճառներով ադրբեջանցիները պաշտոնական պայմանագիր իրենց հետ չեն կնքում: «Պարզ է, որ մեր արտադրանքը Բաքու է հասնում մաքսանենգ ճանապարհով», ասել է Համբարձումյանը: Հիշեցնենք, որ Բաքվում այլ հայկական ապրանքներ նույնպես կարելի է գտնել:

Բաքվի նորակառույց «Բինա» առեւտրի կենտրոնի երկրորդ հարկում գտնվող կանացի հագուստի սրահում բոլոր ապրանքները հայկական «Արցախ» ընկերության արտադրանքն են, հայտնել է ադրբեջանական «Բիզիմ յոլ» թերթը:

Թերթի հետ զրույցում Ադրբեջանի «Անկախ սպառողների միության» նախագահ **Էյուբ Հուսեյնովը** հայտնել է, որ եթե նախկինում Ադրբեջանի տնտեսական զարգացման նախարարության սպառողական շուկայի վերահսկման գծով պետական ծառայությունը հայտնաբերել եւ շուկայից հանել էր հայկական հանքային ջրերի, ծխախոտների եւ սուրճի ապրանքատեսակների շրջանառությունը, ապա այսօր, անհայտ պատճառներով, այդ ծառայությունը չի վերահսկում շուկան:

«Ադրբեջան Հայաստանից անօրինական ճանապարհով միայն հագուստ չէ, որ ներկրվում է: Ադրբեջանի շուկաներում կարող եք հանդիպել Հայաստանում փաթեթավորված սուրճի տեսակներ, գինիներ եւ այլ ապրանքներ: Հայկական ապրանքների վաճառքն Ադրբեջանում կարծես բնական է դարձել», «Բիզիմ յոլ»-ին ասել է Ադրբեջանի «Անկախ սպառողների միության» նախագահը:

Հ. Ա.

# Արգենտինա` առանց վիզայի

Հայաստանի ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը երեկ ընդունել է Արգենտինիայի արտգործնախարարի տեղակալ **Ալբերտո դե Ալոնսոյին**, որը Հայաստան է ժամանել միջգերատեսչական խորհրդակցությունների անցկացման նպատակով:

Էդվարդ Նալբանդյանն ու Ալբերտո դե Ալոնսոն ստորագրել են «Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Արգենտինյան Հանրապետության կառավարության միջեւ սովորական անձնագրերի դեպքում մուտքի արտոնագրի պահանջի վերացման համաձայնագիրը», ՀՀ ԱԳՆ դիվանագիտական դպրոցի տնօրեն Վահե Գաբրիելյանը եւ Ալբերտո դե Ալոնսոն` «ՀՀ ԱԳՆ դիվանագիտական դպրոցի եւ ԱՀ արտաքին գործերի, միջազգային առեւտրի եւ պաշտամունքի նախարարության ազգային արտաքին ծառայության ինստիտուտի միջեւ փոխգործակցության համաձայնագիրը», ՀՀ մշակույթի փոխնախարար Արթուր Պողոսյանը եւ Ալբերտո դե Ալոնսոն` «2011-2015 թթ. Հայաստանի Հանրապետության եւ Արգենտինյան Հանրապետության միջեւ մշակութային համագործակցության մասին ծրագիրը»:

Արտգործնախարար Նալբանդյանը, ըստ ԱԳՆ հաղորդագրության, իր գործընկերոջ հետ հանդիպմանը նշել է, որ երկու երկրների փոխհարաբերությունները դրված են ամուր հիմքերի վրա, իսկ արդեն ստորագրված վիզային ռեժիմի վերացման համաձայնագիրը նոր հնարավորություններ կբացի համագործակցության համակողմանի զարգացման համար:

Ալբերտո դե Ալոնսոն, ընդգծելով, որ իր երկրում ամենաջերմ եւ բարեկամական վերաբերմունքն են տածում Հայաստանի ու հայ ժողովրդի նկատմամբ, ասել է, որ Արգենտինան շարունակելու է Հայաստանի հետ հարաբերությունները խորացնելու քաղաքականությունը:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՆՈՐ ՆՇԱՆԱԿՈՒՄ

# Զոհրաբ Մնացականյանը` ՀՀ փոխարտգործնախարար

**Նախագահ Սերժ Սարգսյանը սեպտեմբերի 14-ին հրամանագիր է ստորագրել Հայաստանի Հանրապետության վերաքննիչ վարչական դատարանի նախագահ Տիգրան Մուկուչյանի լիազորությունները 2011 թվականի սեպտեմբերի 15-ից դադարեցնելու մասին:**



**Նախագահ Սերժ Սարգսյանի երեկվա հրամանագրով Զոհրաբ Մնացականյանն ազատվել է Եվրոպայի խորհրդում Հայաստանի Հանրապետության մշտական ներկայացուցչի պարտականություններից:**

**Նախագահի մեկ այլ հրամանագրով Զոհրաբ Մնացականյանը նշանակվել է Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարի տեղակալ:**

# Վոլֆգանգ Բյորնզեն. Դրսից չի կարելի նրանց (ղարաբաղցիներին) զրկել ընտրության ազատության իրավունքից

**Նախագահ Սերժ Սարգսյանը երեկ ընդունել է Գերմանիայի Դաշնային Հանրապետության Բունդեսթագի «Գերմանիա-Հարավային Կովկաս» խորհրդարանական խմբի պատվիրակությանը:**

**Պաշտոնական հաղորդագրության համաձայն, Սարգսյանը նշել է, որ մեծապես կարեւորում է խմբի այսօրինակ ներկայացուցչական պատվիրակության այցը Հայաստան` որպես երկու երկրների միջեւ փոխճանաչողության բարձրացման ու փոխվստահության խորացման քայլ: Հայաստանի նախագահը շնորհակալություն է հայտնել Գերմանիայի կառավարությանը` համագործակցության եւ տարբեր ոլորտներում Հայաստանին ցուցաբերվող օժանդակության համար:**

**Այս խմբի այցելությունը հատկանշական է, քանի որ «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթին տված հարցազրույցում, որ տպագրվել էր հուլիսին, «Գերմանիա-Հարավային Կովկաս» պատգամավորական խմբի նախագահ, Բունդեսթագի Քրիստոնեա-դեմոկրատական միության պատգամավոր Վոլֆգանգ Բյորնզենը, պատասխանելով Լեռնային Ղարաբաղում ընտրությունների անցկացման ու Եվրոպայի կողմից դրանք չընդունելու հանգամանքի մասին հարցին, նշել էր. «Ընտրություններ չանցկացնելը սխալ կլինի: Այդ մարդիկ, ովքեր տեղում կարող են արտահայտվել, պետք է դա անեն նաեւ ընտրությունների միջոցով: Նրանք պետք է կարողանան ասել, թե իրականում ինչ են ուզում»:**

**Մեկ այլ հարցադրմանը, թե Ղարաբաղում հենց դա էլ անում են, ընտրություններ են անցկացնում` փորձելով ինքնակառավարվել, Բյորնզենը ներկայացրել էր իր անձնական կարծիքը. «Երբ այդ մարդիկ ինչ-որ ձեւով, ընտրությունների միջոցով արտահայտվում են, մենք պետք է դա հարգենք: Սա պետք է նաեւ Եվրոմիությունը հասկանա եւ ընդունի: Ես համարում եմ ընտրությունները սեփական շահերն արտահայտելու միջոց: Մարդիկ պետք է այդ ազատությունն ունենան: Դրսից չի կարելի նրանց զրկել ընտրության ազատության իրավունքից»:**

**Այսօրինակ բացառիկ մոտեցմանը զուգահեռ, «Գերմանիա-Հարավային Կովկաս» պատգամավորական խմբի նախագահը հարցազրույցում նաեւ ընդգծել էր, որ հակամարտություններում ոչ ոք չունի լուծման մի տարբերակ, որը կգոհացնի բոլորին: «Սակայն շահավետ է, որ լուծումների բանակցությունները չընդհատվեն, որ ազգային եւ միջազգային կազմակերպությունները շարունակեն խնդրով զբաղվել, նաեւ Եվրոմիությունն այստեղ ակտիվ մնա. այս ամենը ոգեւորող է», ասել էր Բյորնզենը:**

**«Եվրոպայի փորձը ցույց է տալիս` ով պատերազմին եւ հակամարտությանն է հենվում, նա պարտվում է», հուլիսյան հարցազրույցում նշել էր գերմանացի պատգամավորը:**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*** / հեռ 529353
Համակարգչային շարուածքը
«Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# 2 միլիոն 42 հազար 617 հայ «այո» ասաց անկախությանը

Հանրաքվեի օր որոշվեց սեպտեմբերի 21-ը: Ոգեւորությունը մեծ էր, հանրաքվեին մասնակցել է 2 մլն 56 հազար 792 մարդ, որոնցից անկախությանը «այո» ասաց 2 մլն 42 հազար 617-ը, «ոչ»՝ 10.000-ը: Համազգային տոնախմբություն էր: Սեպտեմբերի 23-ին, հիմք ընդունելով հանրաքվեի արդյունքները, պատիվ ունեցա հռչակել ՀՀ-ն անկախ պետություն: Ես հպարտ եմ, բայց սա շատ ծանր ու պատասխանատու բեռ էր», պաշտոնական ակնարկ կատարելով՝ Հայաստանի անկախության հռչակման մանրամասները ներկայացրեց ՀՀՇ վարչության նախագահ **Արամ Մանուկյանը** «Հայացք»-ում, երեկ: Նրա գնահատմամբ՝ անկախության ձեռքբերումներն այնքան էլ շատ չեն՝ Ղարաբաղի ինքնորոշման իրավունքի ձեռքբերում, ժողովրդավարության հիմքերի հիմնում: «Անկախ Հայաստանի կորուստն այն է, որ տառապանքով անկախության հասած քաղաքացին այդպես էլ իր մաշկի վրա չզգաց իրական աջակցություն, որով նա կարող էր բարգավաճել, ապրել իր երկրում»: Մանուկյանի գնահատմամբ արտագաղթի ծավալները տագնապալի են: «Ռուսաստանում ավելի շատ հայ կա, քան Հայաստանում: Հայաստանի իշխանություններին թույլ են տալիս հանցագործություն կատարել, հետո բռնում են, բայց չեն պատժում, որ կարողանան նրանց հնազանդեցնել: Վազգեն Խաչիկյան, Վարդանիկ Ղուկասյան, Գագիկ Խաչատրյան: Նրանք հանցագործություն են կատարել, սակայն նրանց պահում են, որպեսզի կարողանան ստիպել այլ գործեր կատարել: Վարդանիկը կանի այն, ինչ կասի Սերժ Սարգսյանը, Սերժն էլ կանի այն ինչ կասի ԱՄՆ-ն»: Արամ Մանուկյանի գնահատմամբ՝ կորուստների համար բոլորն են մեղավոր: «Եթե Լֆիկը (նկատի ունի ԱԺ պատգամավոր Սամվել Ալեքսանյանին) շաքարավազը դարձնում է 500 դրամ, բայց մարդիկ չեն բողոքում, բոլորս ենք մեղավոր: Ասում ենք՝ շառից, փորձանքից հեռու եւ հեռանում Հայաստանից, որ այս այլանդակությունները չտեսնենք»:



Մանուկյանի մեկնաբանությամբ՝ իշխանության հետ երկխոսությունը շատ կարեւոր է: Վերջնաժամկետը սեպտեմբերի 30-ն է, մինչ այդ երկխոսող կոալիցիան պետք է պաշտոնապես հայտարարություն անի՝ ընդունո՞ւմ են արտահերթ ընտրությունների անցկացման առաջարկությունը, թե՞ ոչ: Թեպետ իշխանական ամենատարբեր ներկայացուցիչներ ՀԱԿ-ի այս առաջարկին բացասական պատասխան են տվել, սակայն, Մանուկյանի մեկնաբանությամբ, իրենք սպասում են երկխոսող կոալիցիայի պատասխանին: Նա հավելում է, որ արտահերթ ընտրություն չանցկացնելու վերաբերյալ կոալիցիայի ներկայացրած 130-էջանոց հակափաստարկի վերջին 30 էջը չի ընթերցվել: «Եթե նրանք մինչեւ սեպտեմբերի 30-ը ոչինչ չասեն, դա մենք կդիտարկենք ոչ»: Մանուկյանի գնահատմամբ՝ եթե իշխանություններն ազատ արձակեն «քաղբանտարկյալ» Տիգրան Առաքելյանին, ապա երկխոսությունը կշարունակվի:

«**Ազգ**»-ի դիտարկմանը՝ «Տիգրան Առաքելյանին քաղբանտարկյալ անվանելով չե՞ք ցածրացնում քաղբանտարկյալ հասկացությունը», Մանուկյանը պատասխանեց. «Իսկ ի՞նչ կասեք, որ ոստիկանները ոտքերի տակ են գցում երիտասարդներին, ովքեր թռուցիկ են բաժանում»: «Դրանք տարբեր բաներ են: Ոստիկանին չենք արդարացնում, գիտենք ինչպիսի ոստիկաններ կան, սակայն Առաքելյանի պարագայում խնդիրը իրավական է: Ստացվում է, ով հայհոյում է ոստիկանին, նա քաղբանտարկյա՞լ է, անկախ նրանից, թե ով է այդ ոստիկանը» հարցին, Արամ Մանուկյանն ասաց. «Տիգրան Առաքելյանը քաղբանտարկյալ է»:

Հ. Հ.

# «Ասենք, թե Ադամն ու Եվան էլ հայ են, հետո ինչ...»

Եթե այն կամ նա, ինչով կամ ումով ցանկանում ենք, որ մեզ ճանաչեն աշխարհում արդեն անցյալում են կամ այլ մշակույթի կրող, ապա ինչպե՞ս ենք այսօր ներկայանում աշխարհին. ունե՞նք արդյոք «ազգային բրենդ», ո՞րն է այսօրվա Հայաստանի ներկայանալի դարձնող երեւույթը: Այս հարցերին երեկ ասուլիսում պատասխանեց գերմանահայ PR մասնագետ, փիլիսոփայության դոկտոր Վազրիկ Բազիլը: «Հայերն այժմ ներկայանում են աշխարհին ոչ թե որպես արարող, այլ որպես ուրիշի ստեղծածն օգտագործող եւ միաժամանակ «ինքնաթանգարանացման» ուղին բռնած ազգ: Բազիլի խոսքով՝ հայերը կիրառող են, բայց ոչ ստեղծագործող, քանի որ «կիրառում ենք ուրիշի ստեղծածը, սակայն ո՞ւր է մեր ստեղծածը, որպեսզի տարբերվենք: Բայց դա չի նշանակում, որ հինը աղբ է, իսկ նորը՝ սրբություն, ո՛չ: Պետք է կարողանալ հինը ներկայացնել նորովի մոտեցմամբ, նոր գաղափարախոսությամբ: Օրինակ՝ կարելի է ներկայացնել Նարեկացու տաղերն ու «Մասյան ողբերգության»-ը ջազի միջոցով»: Բազիլի եզրակացմամբ՝ հայերս բնույթով դիակապաշտ ենք, որովհետեւ զբաղված ենք ինքնաթանգարանացմամբ. «Գիտեք, որ թանգարանում շնչավոր չկա, անշունչն ու անկենդանն է այնտեղ, եւ եթե ուզում ենք կենդանի լինել, ապա պետք է ինքնաթանգարանացման գործընթացից հրաժարվենք: Հայերը սիրում են ապացուցել, որ հին են, առաջինն են ընդունել քրիստոնեությունը: Ասենք՝ ապացուցեցին, ասենք՝ Ադամն ու Եվան էլ են հայ, հետո ինչ: Ո՞րն է իմաստը, եթե հնությունը զուտ հնություն է մնում: Հնությունը հնությամբ, բայց դու ո՞վ ես այսօր, ի՞նչ նոր բան ես արարել»: Ըստ որում՝ փորձագետի խոսքերով նորարարության համար ամենեւին էլ անհրաժեշտ չեն մեծ ներդրումներ. «Յուրահատուկ լինելու համար հաճախ անհրաժեշտ չեն մեծ ներդրումներ: Մենք պետք է ավելի քիչ ներդրում անենք բետոնի վրա եւ ավելի շատ՝ ուղեղի վրա», նշեց Բազիլը:



«Ազգային բրենդ» ձեւավորելու համար, մասնագետի խոսքերով, անհրաժեշտ է ներկայանալ այնպես, ինչպես կանք: «Պետք չէ ներկայանալ աշխարհին Շառլ Ազնավուրով, Շերլին Սարգսյանով, ովքեր այլ մշակույթի ծնունդ են եւ ձեւավորվել են այլ մշակույթի ազդեցության ներքո»: Թերեւս միակ դրական միտումը «ազգաներկայացման ոլորտում» ըստ Բազիլի, այն է, որ դեպի դրականն է փոխվել հայ պաշտոնյաների կեցվածքը արտերկրում. «Մի քանի անգամ եմ լսել նախագահ Սարգսյանի ելույթները արտասահմանում: Նա ներկայանալի է, խոսում է հանդարտ, առանց բառերը ծամծմելու», եզրափակեց գերմանահայ մասնագետը:

Հ. Ա.

# Նորակառույց դպրոց Աշոցքում

«Հայաստան» համահայկական հիմնադրամի Ֆրանսիայի տեղական մարմնի հովանավորությամբ Աշոցքում դպրոց կկառուցվի: Նորակառույցի 4 մասնաշենքերից երկուսը նախատեսված են ուսումնական պարապմունքների, մնացած երկուսը՝ մարզական պարապմունքների եւ դպրոցական միջոցառումների համար: Շենքը ապահովված կլինի կենտրոնական ջեռուցման եւ օդափոխության համակարգով: Դպրոցն իր հարկի տակ կընդունի 360 աշակերտի: Հողային աշխատանքներն ավարտված են, շենքի հիմքը կառուցված է: Գյուղի ներկայիս դպրոցը կառուցվել էր 1970-ականներին, չուներ կենտրոնական ջեռուցում, շինությունն անբարեկարգ էր: Դպրոցի տնօրեն Հասմիկ Խաչատրյանի փոխանցմամբ՝ դպրոցը լավ ավանդույթներ ունի, շրջանավարտների 90 տոկոսը ուսումը շարունակում է Երեւանի կամ Գյումրիի կրթական հաստատություններում: «Արդի պայմանները կշահագրգռեն երեխաներին շարունակել արժեւորել կրթությունը»:

Հ. Հ.

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏՈՒՄ

# Աղետի գոտում բնակարան ստանալու փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետը նոյեմբերի 1-ն է

*Վարչապետը խոստանում է բազմաբնակարան շենքերի շինարարություն ամբողջ Հայաստանում*

**Աղետի գոտու բնակավայրերերից Գյումրիում եւ Ախուրյանում բնակարան ստանալու հավակնող ընտանիքների կողմից ընտանիքի անդամների վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելու վերջնաժամկետ է սահմանվել 2011-ի նոյեմբերի 1-ը: Կառավարության երեկ ընդունած այս որոշման առնչությամբ վարչապետ Տիգրան Սարգսյանը նշեց, որ առաջին հերթին անհրաժեշտ է, որ այդ վերջնաժամկետի մասին քաղաքացիներն իրազեկվեն: «Մեր ծրագիրը նախատեսված էր շուրջ 7 հազար անօթեւան ընտանիքների բնակարաններով ապահովելու համար: Արդյունքում ամբողջությամբ կատարում ենք մեր պարտավորություններն անօթեւանների, մասնավորապես այն ընտանիքների նկատմամբ, որոնք համապատասխանում են այն չափանիշներին, որոնք սահմանված էին մեր կողմից», ասաց վարչապետը եւ շարունակեց. «Մենք շատ քաջ գիտակցում ենք, որ այդ ցուցակների ճշգրտումը բավական բարդ գործընթաց է եւ պայմանավորված է այն հանգամանքով, որ իրականում աղետի հետեւանքով անօթեւան դարձածները եւ սոցիալական խնդիրներ ունեցող ընտանիքները փորձում են այս ծրագրից օգտվել, եւ շատ դժվար է այդ տարանջատումն իրականացնել, որովհետեւ շատ հաճախ իսկապես սոցիալապես անապահով ընտանիքներ նույնպես ցանկություն ունեն օգտվել ծրագրից, բայց օբյեկտիվ չափանիշները, որոնք դրված են ծրագրի հիմքում, թույլ չեն տալիս այդ»:**

**Տիգրան Սարգսյանը հայտնեց, որ նախարարական կոմիտեում քննարկվել է բազմաբնակարան շենքերի հիմնախնդիրը: Նրա տեղեկացմամբ, Հայաստանում կան 21 հազարից ավելի բազմաբնակարան շենք, որոնց դրանց զգալի մասը «խրուշչովյան» տարիներին կառուցված շենքերն են եւ որոնց ֆիզիկական մաշվածության աստիճանը բավական բարձր է, եւ վթարային դառնալու լուրջ խնդիր ունեն: «Այդ պատճառով, ավարտելով այս ծրագիրը, 2012 թ. արդեն պետք է ձեռնամուխ լինենք նորի իրականացմանը», ասաց Տիգրան Սարգսյանը: Ըստ վարչապետի, յուրաքանչյուր տարի գումար է հատկացվելու բազմաբնակարան շենքերի խնդիրները լուծելու համար, եւ ուշադրության կենտրոնում լինելու են առաջին հերթին սոցիալապես անապահով ընտանիքները, որոնք ունեն այդպիսի խնդիրներ:**




# Արտոնությունների ժամկետները երկարացվեցին

**«Էկոտոմատո» ընկերության կողմից 300 մլն դրամը գերազանցող ապրանքների ներմուծման դեպքում ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) գումարների վճարման ժամկետը փոփոխվեց ստեղծվելիք ջերմոցային տնտեսությանն անհրաժեշտ մոտ 40 ապրանքատեսակների ներկրումը դյուրացնելու նպատակով, իսկ «Ռուսալ Արմենալ» եւ Վանաձորի «Գլորիա» կարի ֆաբրիկա» ընկերությունների նկատմամբ կիրառված «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմի ժամկետները երկարաձգվեցին մինչեւ 2012-ի սեպտեմբերի 8-ը եւ 2014-ի օգոստոսի 25-ը: Կառավարության ընդունած այս որոշումների մասին նշվեց, որ երկու ընկերությունն էլ ունեն արտահանման ուղղվածություն, ինչը կարող է խթանել նոր ներդրումների իրացումը եւ արտաքին շուկաներում մեծացնել տեղական արտադրանքի մրցունակությունը:**

# «Հայռուսգազարդին»՝ 184 մլն դրամ

**Էներգետիկայի եւ բնական պաշարների նախարարին երեկ կառավարությունը պարտավորեցրեց նախարարության համակարգի պետական ընկերությունների գործունեության արդյունքում առաջացած շահույթի հաշվին ապահովել մոտ 184 մլն դրամ գումար վճարել «Հայռուսգազարդ»-ին՝ անապահով ընտանիքների կողմից 2011-ի ապրիլ-հունիս ամիսներին սպառած բնական գազի մասնակի փոխհատուցման գումարի վճարելու համար:**

Ա. Ս.

# ՄԻՊ-ը դիմել է արդարադատության նախարարին

**Օգոստոսի կեսերին մարդու իրավունքների պաշտպանի (ՄԻՊ) գրասենյակը երեք տարբեր քաղաքացիներից դիմում էր ստացել, որ դատավորներ Երեմ Եսոյանը, Մասիս Ռեհանյանը եւ Յուրիկ Իսկոյան իրենց հանդեպ անարդար են գործել: ՄԻՊ-ը, ուսումնասիրելով գործերը, դատավորների գործունեությունը գնահատեց ոչ բավարար. դատավորները թույլ էին տվել օրենքի ակնհայտ եւ կոպիտ խախտում: Այնուհետեւ պաշտպանը դատավորների վերաբերյալ կարգապահական վարույթ հարուցելու հաղորդում ներկայացրեց Արդարադատության խորհրդի կարգապահական հանձնաժողովին եւ իր հաղորդումների մասին իրազեկեց հանրությանը: Սկսվեց փոխհրաձգությունների մի տարափ նախ ՄԻՊ-ի եւ Վճռաբեկ դատարանի, այնուհետեւ Արդարադատության խորհրդի կարգապահական հանձնաժողովի միջեւ (այդ ամենին «Ազգ»-ը անդրադարձել է): Վերջին կառույցը մերժեց վարույթի հարուցումը՝ հիմնավորմամբ, որ հիմքերը բավարար չեն:**

**Սպառված չհամարելով գործընթացը՝ պաշտպանը երեկ հաղորդում է ներկայացրել դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու իրավասություն ունեցող հաջորդ մարմնին՝ արդարադատության նախարար Հրայր Թովմասյանին:**

Հ. Հ.

# Հայ-վրացական սահմանին կգործեն նոր` հիմնովին վերակառուցված մաքսակետեր

***Իրագործվում է ՀՀ նախագահի հանձնարարականը. Հայաստանը շուտով կունենա բոլորովին նոր սահմանային անցակետեր` ժամանակակից շենքային պայմաններով եւ սպասարկման բարձր մակարդակով:***

«Ծրագրի առաջին փուլում ընտրել ենք Բագրատաշենի, Բավրայի եւ Գոգավանի սահմանակետերը. նախատեսում ենք ոչ թե պարզապես վերանորոգել, այլ կառուցել միջազգային չափանիշներին համապատասխանող բոլորովին նոր մաքսակետեր, դրանք հագեցնել նորագույն տեխնիկական միջոցներով եւ ներդնել սահմանահատման ժամանակակից ընթացակարգեր: Այս ուղղությամբ աշխատանքներն արդեն ընթացքի մեջ են», վստահեցնում է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի նախագահի **Գագիկ Խաչատրյանը**:

**- Պարոն Խաչատրյան, սահմանային անցակետերի արդիականացման պահանջը ՀՀ նախագահի կողմից բարձրացվեց դեռեւ նախորդ տարի` Տավուշ կատարած աշխատանքային այցի ժամանակ: Հենց նախորդ տարի էլ ստեղծվեց միջգերատեսչական երկու աշխատանքային խումբ, որոնք պետք է անցակետերի արդիականացման հստակ ծրագիր եւ ժամանակացույց ներկայացնեին: Հաշվի առնելով, որ աշխատանքային խմբերից մեկը ղեկավարում եք Դուք, կարո՞ղ եք մանրամասնել, թե այժմ ինչ փուլում են այդ միջոցառումները:**

- Սահմանային անցակետերի արդիականացման եւ եվրոպական չափանիշներին համապատասխանեցման պահանջը դրված է ոչ միայն մաքսային մարմինների, այլ նաեւ սահմանային բոլոր գերատեսչությունների առջեւ, քանի որ խնդիրը պետական սահմանին իրականացվող ոչ միայն մաքսային, այլ նաեւ մյուս բոլոր ընթացակարգերի բարելավումն է, սահմանային տարբեր գերատեսչությունների աշխատանքների հնարավորինս ինտեգրումը, սահմանային անվտանգության խնդիրների իրավական կարգավորումը եւ դրանց համապատասխանեցումը միջազգային առաջավոր փորձին: Այս ամենի հիմքում սահմանների համալիր կառավարման սկզբունքն է, որը բացառում է գործառույթների կրկնությունները ու բարձրացնում սահմանային հսկողության արդյունավետությունը. այդպիսով հնարավոր կլինի կյանքի կոչել նաեւ ազատ առեւտրի գաղափարի իրագործումը, այդ թվում` նպաստել «Հայաստանի եւ Եվրոմիության միջեւ ազատ առեւտրի խոր եւ համապարփակ համաձայնագրի» առավել արագ ստորագրմանը:

Ծրագրված բոլոր այս բարեփոխումների իրականացման նպատակով դեռեւ նախորդ տարի ՀՀ կառավարության որոշմամբ ստեղծվեց միջգերատեսչական երկու աշխատանքային խումբ` ՀՀ արդարադատության նախարարի եւ իմ գլխավորությամբ: Նշեմ, որ մեր աշխատանքային խմբի կողմից ծրագրի իրագործման ուղղությամբ արդեն իսկ զգալի աշխատանք է տարվել, եւ կազմվել է սահմանային անցակետերի արդիականացման միջոցառումների հստակ ժամանակացույց, որի համաձայն` ամբողջությամբ վերակառուցվելու են մաքսակետերի ոչ միայն շենքային պայմանները, այլեւ ներքին տեխնիկական սխեման, ամբողջ ենթակառուցվածքային համակարգը: Բացի դրանից` սահմանային կետերի արդիականացման գործում կարեւորելով «մեկ կանգառ-մեկ պատուհան» սկզբունքի ներդրումը եւ հաշվի առնելով այդ ուղղությամբ Վրաստանի եկամուտների ծառայության հետ ձեռք բերված պայմանավորվածությունը, իմ հանձնարարականով Պետական եկամուտների կոմիտեում եւս ստեղծվել է երեք աշխատանքային խումբ: Նրանք զբաղվելու են սահմանային անցակետերում ենթակառուցվածքների, ինստիտուցիոնալ բարեփոխումների եւ օրենսդրության, ինչպես նաեւ տեղեկատվական տեխնոլոգիաների ներդաշնակեցման ու ինտեգրման հարցերով:

**- Սահմանային անցակետերի արդիականացման ծրագրի առաջին փուլում ընտրվել են Բագրատաշենի, Բավրայի եւ Գոգավանի անցակետերը: Ինչո՞վ է պայմանավորված հատկապես այս մաքսակետերի վերակառուցման առաջնահերթությունը:**

- Անցակետերի արդիականացման խնդիրն առավել հրատապ է հայ-վրացական սահմանին, որտեղ ներկայումս սահմանային հսկողության նպատակով օգտագործվող շենք-շինություններից որեւէ մեկն այդ նպատակի համար հատուկ նախագծված չի եղել, ինչը հնարավորություն չի տալիս ուղեւորների եւ բեռների սահմանահատման գործընթացում ներդնել ժամանակակից ընթացակարգեր եւ տեխնոլոգիաներ: Բացի դրանից` հենց նշված մաքսակետերին է բաժին ընկնում հայ-վրացական սահմանով իրականացվող ապրանքաշրջանառության հիմնական մասը: Այդ պատճառով էլ սահմանային անցակետերի արդիականացման ծրագրի առաջին փուլում որպես թիրախային կետեր ընտրել ենք Բագրատաշենի, Բավրայի եւ Գոգավանի անցումային կետերը: Նախատեսում ենք ոչ թե պարզապես վերանորոգել, այլ հին շինությունների փոխարեն կառուցել միջազգային չափանիշներին համապատասխանող բոլորովին նոր հատակագծով անցումային կետեր, դրանք հագեցնել նորագույն տեխնիկական միջոցներով եւ ներդնել սահմանահատման ժամանակակից ընթացակարգեր: Այս ուղղությամբ աշխատանքներն արդեն ընթացքի մեջ են: Մասնավորապես, ՄԱԿ-ի զարգացման ծրագրի աջակցությամբ ավարտական փուլում են նախագծային աշխատանքները, որոնք իրականացվում են միջազգային տենդերի միջոցով ընտրված, այդ ոլորտում աշխատանքի մեծ փորձ ունեցող լատվիական ARHIS կազմակերպության կողմից:



**- Պարոն Խաչատրյան, որքանով հայտնի է` սահմանային անցակետերում շինարարական աշխատանքների իրականացման մրցույթ հայտարարելու համար ՀՀ կառավարության որոշմամբ ստեղծվելու է նաեւ հանձնաժողով, որը նախագահելու եք Դուք: Կարո՞ղ եք մոտավոր ժամկետներ նշել, թե երբ կսկսվեն շինարարական աշխատանքները:**

- Միանգամայն իրատեսական է բուն շինարարական աշխատանքների իրականացման մրցույթը հայտարարել աշնանը: Կարծում եմ` այդ ժամանակացույցով առաջնորդվելու դեպքում, շինարարական աշխատանքները հնարավոր կլինի սկսել նոյեմբերից, իսկ գործընթացն ամբողջությամբ կիրականացվի 2012 թվականի ընթացքում:

Նախատեսում ենք ընդլայնել սահմանային բոլոր երեք կետերի տարածքները, մասնավորապես, Բագրատաշենինը կկազմի 10 հեկտար` 3 անգամ գերազանցելով ներկա տարածքի մակերեսը: Բացի դրանից` Բագրատաշենում` Դեբեդ գետի վրա կկառուցենք նոր կամուրջ, որը կունենա երթեւեկելի երկու առանձին հատված` յուրաքանչյուրը 10 մետր լայնությամբ: Կամրջի վրա կլինեն նաեւ հետիոտնի համար նախատեսված անցումներ: Ի դեպ, այն լինելու է բավականին գեղեցիկ ճարտարապետական կառույց, իսկ ներկայումս շահագործվող կամուրջը, որն ընդամենը նոր կառուցվելիքի մեկ քառորդ լայնության է, նույնպես կվերանորոգվի եւ կօգտագործվի պահուստային նպատակներով:

Թե Բագրատաշենի եւ թե Բավրայի անցակետերում կկառուցվի մուտքի եւ ելքի համար նախատեսված 4-ական ուղի, այսինքն յուրաքանչյուր ուղղությամբ` երկուսը բեռնատար եւ երկուսը` մարդատար ավտոմեքենաների համար: Միայն Գոգավանի անցակետում, ելնելով տարածքային առանձնահատկությունից, յուրաքանչյուր կողմի համար կգործի երկուական ուղի: Այս ամենի արդյունքում հնարավորություն կունենանք խուսափել հերթերից եւ կուտակումներից, սպասարկումն էլ շատ արագ կիրականացվի. օրական 600 ավտոմեքենայի եւ 2000 ուղեւորի սպասարկելու հնարավորություն կստեղծվի, այսինքն` 4-5 անգամ ավելի ներկա ծավալներից: Ավտոմեքենաների համար նախատեսված հատուկ կանգառներ եւ տերմինալներ կկառուցվեն բոլոր երեք անցակետերում էլ: Տեղադրվելու են նաեւ առավել մանրակրկիտ զննման համար նախատեսված «Ռադիսկան» սարքավորումներ, որոնց օգնությամբ էլ ավելի կուժեղացվի սահմանային հսկողությունը: Իսկ հարեւան երկրներում համաճարակների բռնկման ժամանակ մեր հանրապետության սահմանին սանիտարահիգիենիկ ուժեղացված հսկողություն ապահովելու նպատակով` բոլոր երեք անցակետերում կառուցվելու են ավտոմեքենաների ախտահանման եւ լվացման հատուկ կետեր: Լուծվելու են նաեւ ջրամատակարարման եւ էլեկտրասնուցման խնդիրները: Բոլոր երեք անցակետերում էլ կառուցվելու են խորքային հորատանցքեր, իսկ էլեկտրաէներգիայի մատակարարման համար` հելիոկոլեկտորներ, որոնք կօգտագործեն արեւի էներգիան` վարչական շենքերում էլեկտրաէներգիայի եւ տաք ջրի մատակարարման համար, ինչը թե՛ էկոլոգիապես մաքուր է եւ թե՛ նվազ ծախսատար:

Բագրատաշենի եւ Բավրայի անցակետերում նախատեսվում է կառուցել նաեւ հատուկ հրապարակներ` ուղղաթիռների կայանման համար: Սա հատկապես անհրաժեշտ կլինի արագ արձագանքման հետ կապված խնդիրներ առաջանալու դեպքում: Բոլոր երեք անցակետերում հատուկ տարածքներ կառանձնացվեն նաեւ կինոլոգիական ծառայությունների ապահովման համար. յուրաքանչյուր տարածքում անհրաժեշտ կացարաններ կհատկացվեն 6 վարժեցված շների համար:

Ինչ վերաբերում է Գոգավանին, ապա այդ անցակետի տարածքը կընդլայնվի ավելի քան 2 անգամ, իսկ կառուցվելիք շենքը համարեցված կլինի հատուկ այդ տեղանքին: Պետք է նշեմ, որ տարածքների ընդլայնումը իրականացվելու է տվյալ տեղանքների բնակիչներից որոշ հողատարածքների օտարման հաշվին, որոնք ՀՀ կառավարության որոշմամբ պետք է ճանաչվեն պետական գերակա հանրային շահ, եւ այդ ուղղությամբ արդեն բանակցություններ են տարվել քաղաքացիների հետ: Երկկողմ համաձայնության արդյունքում շինարարության համար անհրաժեշտ հողատարածքները սեփականատերերից կօտարվեն փոխհատուցման դիմաց:

Բավրայում եւս, 2-ի փոխարեն, 7,7 հեկտար տարածքի վրա կառուցվելու է բավականին մեծ շինություն, իսկ մաքսային հսկողության գոտին մոտ 800 մետրով մոտեցվելու է վրացական կողմի անցակետին: Եվ ամենակարեւորը` իրականացվելիք կառուցապատումներն այնպես են կազմակերպվելու, որպեսզի չխոչընդոտեն անցակետերի բնականոն աշխատանքային ռեժիմին:

Այսպիսով` սահմանային հսկողության բոլորովին նոր որակ ենք ապահովելու: Տվյալ դեպքում խոսքը ոչ թե արդյունավետության աճի, այլ սկզբունքորեն նոր որակական մակարդակի մասին է:

**- Կարո՞ղ ենք ասել, որ այդ նոր որակը վերաբերելու է նաեւ մաքսային ձեւակերպումների ընթացակարգերի պարզեցմանը:**

- Միանշանակ, նոր մաքսակետերն ինքնըստինքյան ենթադրելու են պարզեցված ընթացակարգեր: Ճիշտ է, նախորդ ամիսներին մենք արդեն իսկ որոշակի աշխատանքներ տարել ենք փաստաթղթերի կրճատման ուղղությամբ, որոնք նույնպես էականորեն նվազեցնում են ձեւակերպումների վրա ծախսվող ժամանակահատվածը, սակայն ընթացակարգերի պարզեցման ուղղությամբ շատ աշխատանքներ ընդգրկված են այս առաջիկա ծրագրում: Օրինակ, այժմ դեռ լիարժեքորեն չենք կարող հաշվառել ձեւակերպումների ամբողջ շղթայի վրա ծախսվող ժամանակը, քանի որ մաքսակետերում գործընթացներն ավտոմատացված չեն: ՀՀ նախագահի կողմից, սակայն, հանձնարարական է տրվել սահմանային նոր անցակետերում կիրառել էլեկտրոնային տեխնոլոգիական համակարգ, որի միջոցով հնարավոր կլինի ժամանակային առումով վերահսկել մաքսային ընթացակարգերի ամբողջ շղթան` սկսած մաքսակետ տվյալ ավտոմեքենայի մուտքից: Այսինքն` բոլոր երեք սահմանային անցակետերի տարածքներում տեղադրվելու են հատուկ տեսասարքավորումներ, որոնց միջոցով շուրջօրյա հսկողություն է սահմանվելու. արդյունքում հնարավոր կլինի ֆիքսել մաքսային յուրաքանչյուր գործընթացի վրա ծախսվող ժամանակը եւ ըստ այդմ քայլեր ձեռնարկել` այն հնարավորինս կրճատելու ուղղությամբ:

Այս լայնածավալ բարեփոխումներն իրենց հերթին կհանգեցնեն ընթացակարգերի պարզեցմանն ու կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը, ինչպես նաեւ առավել արդյունավետ հսկողությանը: Սահմանակետերում հատուկ ուշադրություն ենք դարձնելու նաեւ սպասարկման մակարդակի բարձրացմանը. բոլոր մաքսակետերում անխտիր մաքսային մարմինների աշխատակիցները պարտավոր են լինելու սահմանը հատող անձանց նկատմամբ դրսեւորել էթիկայի բարձր նորմերին համապատասխան վարքագիծ եւ բարեկիրթ վերաբերմունք: Ի դեպ, այս բարեփոխումներում նախատեսում ենք ակտիվ համագործակցություն ինչպես պետական այլ մարմինների, այնպես էլ օտարերկրյա պետությունների մաքսային ծառայությունների հետ, ինչը կօգնի միջազգային լավագույն փորձի տեղայնացմանը Հայաստանում, Եվրոմիության անդամ երկրների մաքսային մարմինների հետ փոխադարձ կապերի ամրապնդմանը. արդյունքում հնարավոր կդառնա նաեւ տեղեկատվության եւ էլեկտրոնային կապուղիներով մաքսային հայտարարագրերի փոխանակումը:

Քանի որ աշխատանքները նախ տարվելու են հայ-վրացական սահմանի անցման կետերում, ուստի կարեւորվում է նաեւ վրացական կողմի հետ համագործակցությունը: Այդ նպատակով մենք պատրաստել ենք հայ-վրացական սահմանային կետերի համատեղ օգտագործման համաձայնագրի նախագիծ, որի ստորագրումն այժմ ընթացքի մեջ է: Նմանատիպ եւս մեկ համաձայնագիր, որն արդեն հավանության է արժանացել ՀՀ կառավարության կողմից, նախատեսվում է կնքել նաեւ իրանական կողմի հետ:

**- Անցակետերի արդիականացման ամենակարեւոր միջոցառումներից մեկը սահմանային անցակետերում «մեկ կանգառ-մեկ պատուհան» սկզբունքի ներդրումն է: Որքանո՞վ արդյունավետ կլինի դրա իրագործումը:**

- Նախ` կբացառվեն շատ գործառույթների կրկնություններ, այդ թվում` ոչ անհրաժեշտ կամ կրկնակի վերահսկողության եւ հսկողության իրականացումը: Միասնական գործառույթներ կսահմանվեն անցակետերում գործող տարբեր ծառայությունների համար, կբարձրանա նրանց գործունեության արդյունավետությունը: Ամենակարեւորը` «մեկ կանգառ-մեկ պատուհան» սկզբունքը նախատեսում է նաեւ համատեղ հսկողության կազմակերպում միեւնույն շինությունում, ինչը քաղաքացիներին կազատի ավելորդ հոգսերից եւ ընթացակարգային ձգձգումներից. օրինակ` սահմանապահ զորքերի եւ մաքսային ծառայության միջեւ համատեղ հսկողության կազմակերպումը հնարավոր կլինի առավել արդյունավետ իրականացնել, երբ սահմանապահ եւ մաքսային ծառայությունները գործեն միեւնույն վայրում:

Ծրագրի ավարտից հետո ակնկալում ենք, որ հայ-վրացական սահմանով ուղեւորվող անձանց համար սահմանահատման գործընթացը կլինի նույնքան պարզ եւ հասկանալի, որքան Եվրոմիության արտաքին սահմանային անցումային կետերում է: Ավելին. հաշվի առնելով, որ եվրոպական երկրների մաքսակետերը կառուցվել են տարիներ առաջ` մեր անցակետերի կառուցման ժամանակ արդեն կօգտագործվեն ավելի առաջադեմ տեխնոլոգիաներ, կընտրվեն կառուցապատման ամենաթարմ լուծումները: ■

# Մնացին միմյանց հույսի՞

Բաքվում Թուրքիայի դեսպան Խուլուսի Քըլըչը երեկ լրագրողներին ասել է, որ ոչ ուշ, քան մինչեւ նոյեմբերի 15-ը Ստամբուլում կգումարվի Թուրքիա-Ադրբեջան Ռազմավարական խորհրդի նիստը, որին կմասնակցի Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը: Նիստը նախապես ծրագրված էր գումարել Թուրքիայի վարչապետի Բաքու այցի օրերին, սակայն վերջին պահին «տեխնիկական խնդիրներ» էին առաջացել:

Բաքվում Թուրքիայի դեսպանի անոնսը բովանդակային առումով որեւէ նորություն չունի: Փոխարենը, թվում է, պետք է կարեւորել այն, որ Իլհամ Ալիեւի Ստամբուլ այցի մասին հայտարարվում է հենց այս պահին: Բանն այն է, որ Թուրքիայի վարչապետ Էրդողանի եգիպտական այցն իր գլխավոր նպատակադրվածության մեջ կարելի է համարել ձախողված: Էրդողանն ասել էր, որ «Գազայում մեզ սպասում են», բայց Պաղեստինի ինքնավարության առաջնորդի հետ նրա հանդիպումը տեղի է ունեցել Կահիրեում:

Իսկ դա ամենեւին էլ չի խոսում Թուրքիայի օգտին, որը վերջերս բավական ընդգծված հավակնություններ էր դրսեւորում հասկապես Պաղեստինի անկախության «կնքահայր» դառնալու իմաստով: Եթե Էրդողանն առանց Իսրայելի համաձայնության մուտք գործեր Գազայի հատված, ապա, ըստ երեւույթին, կդիտվեր որպես «արաբական աշխարհի հովանավոր»: Այդ քայլին նա չի դիմել: Ի՞նչ դրդապատճառներից մղված՝ կարելի է զանազան ենթադրություններ անել:

Մեզ, սակայն, թվում է, որ «Գազայում մեզ սպասում են» ասելով Էրդողանը պարզապես միայն իր ցանկություններ էր արտահայտել՝ լինել Գազայում: Իսկ որ նրան այնտեղ չէին սպասում, վկայում է փաստը, որ Եգիպտոս Էրդողանի այցի տառացիորեն նախօրեին Գազան վերահսկող «Համաս»-ից ընտրված պաղեստինյան պատգամավորներն ուղերձ էին հղել Մահմուդ Աբբասին եւ հորդորել, որ Պաղեստինի անկախության ճանաչման միջնորդությամբ չդիմի ՄԱԿ-ին: Բացատրությունը մեկն էր. «Դա կարող է վնասել Պաղեստինի գործին»:

Կարելի է, իհարկե, ասել, որ «Համաս»-ն այդ քայլին դիմել է՝ չցանկանալով, որ Պաղեստինը ճանաչվի իր համար անընդունելի սահմաններում: Բայց եթե նկատի ունենանք, որ «Համաս»-ը տարածաշրջանում ներկայանում է որպես Իրանի համակիր կազմակերպություն, ապա տրամաբանական կթվա, որ այդ կերպ նա չի ցանկացել, որ Պաղեստինի անկախության ջատագովի եւ հովանավորի դափնին անցնի Թուրքիային:

Որ Էրդողանի կառավարության «զրո խնդիրներ հարեւանների հետ» ծրագիրն անհաջողության է մատնվել, չեն թաքցնում նույնիսկ թուրքական եւ ադրբեջանական լրատվամիջոցները: Եվ դա իրականություն է. վատթարացել են թուրք-իրանական, թուրք-իսրայելական հարաբերությունները, իսկ Ցյուրիխյան արձանագրությունների շուրջը Թուրքիայի խորհրդարանում վերջին զարգացումները գալիս են արձանագրելու հայ-թուրքական «պատմական հաշտեցման» նախաձեռնության կատարյալ տապալումը:

Այս իրավիճակում, բնական է, գոնե սեփական հանրության առաջ դեմք պահելու համար Էրդողանի կառավարությանը ոչինչ չի մնում, քան «մեկ ազգ, երկու պետություն» կարգախոսի վրա մտասեւեռվել: Եվ Թուրքիա-Ադրբեջան Ռազմավարական խորհրդի նիստը, որ ծրագրվել է անցկացնել ոչ ուշ, քան մինչեւ նոյեմբերի 15-ը, կարող է որոշ չափով «փոխհատուցել մյուս ուղղություններում ձախողումները»:

Դա լիովին տեղավորվում է ադրբեջանական կողմի ընկալումներում: Մյուս կողմից, մինչդեռ, Թուրքիայի հավակնոտության ձախողումը կարող է այդ երկրի մասին ադրբեջանական հանրության պատկերացումների տրանսֆորմացիայի սկիզբ դառնալ: Այդ մասին, ի դեպ, Էրդողանի եգիպտական այցից առաջ մեկնաբանություն էր արել Բաքվի «Զերկալոն» եւ ակնարկել, որ «Իսրայելի հետ հարաբերություններում Թուրքիան գլխից բարձր թռչել չի կարող»:

**Վ. Ա.**

# Ազգային փոքրամասնությունները միջոց են Թուրքիայի կառավարության եւ ԱՄՆ պետքարտուղարության համար

*1-ին էջից*

Պետքարտուղարության զեկուցագրի մասին սեպտեմբերի 14-ին նշել էր «Ամերիկայի ձայն» ռադիոկայանի թուրքական ծառայությունը: Իսկ պետքարտուղարի ողջույնին նույն օրը անդրադարձել է CNN-turk-ը: Համենայն դեպս, զեկուցագիրը Էրդողանին ողջունելու, առավել եւս Թուրքիայում կրոնական հանդուրժողականության հետեւությանը հանգելու որեւէ հիմք չի տալիս, գոնե դրա համար, որ 1971-ից առ այսօր փակ է մնում հույն հոգեւոր ճեմարանը, էլ չենք խոսում Սուրբ Խաչ դպրեվանքի մասին, որն այդ թվին վերածվեց սովորական դպրոցի:

Ինչ վերաբերում է համայնքային կալվածքների մասին հրամանագրին, որը օրենքի ուժ է ստացել օգոստոսի 27-ին, ապա դա էլ ընդամենը հարցականներ է առաջացնում: Հայտնի չեն կալվածքները վերադարձնելու պայմանները, բացի դրանից՝ պետականորեն առգրավվելուց հետո դրանց մի մասը վաճառվելու պատճառով ձեռքից ձեռք է անցել կամ վերափոխվել է այլ կառույցի, ինչպես օրինակ՝ Գեդիկփաշայի ավտոկանգառի վերածված հայ բողոքական վարժարանը:

Հատկանշական է, որ Էրդողանի կառավարության հրամանագիրը ողջունում են նաեւ հայ, հույն եւ հրեա համայնքները, ընդ որում քաջատեղյակ լինելով դրա բոլոր թերություններին: Ինչո՞ւ: Այդ հարցին «Զամանի» սեպտեմբերի 11-ի համարում «Փոքրամասնությունների անվերջանալի տանջանքը» վերնագրով պատասխանել է Աբդուլլահ Յավուզ Ալթունը:

Հոդվածագիրը նշում է, որ 1936-ից ի վեր առգրավված համայնքային կալվածքների վերադարձման գործընթացը Թուրքիայում սկզբնավորվել է 2002-ին, Էրդողանի «Արդարություն ու բարգավաճում» կուսակցության իշխանությամբ, շնորհիվ Եվրոմիության հետ ներդաշնակության օրենքների ընդունման: Այդ ուղղությամբ, ըստ նրա, որոշակի քայլեր էին կատարվել 2003-ին եւ 2008-ին, սակայն դրանք ժեստի բնույթ ստացան:

Այնուհետեւ հեղինակը 1915-ի ցեղասպանության օրինակով անդրադառնում է համայնքային կալվածքների առգրավման պատմությանը, նշում է, որ Օսմանյան Թուրքիայում հայերի տեղահանությունից հետո երիտթուրքերի ընդունած «տիրազուրկ կալվածքների» մասին օրենքով պետականացվել է տեղահանվածների ունեցվածքը, թեեւ 1920-ին որոշվել է վերադարձնել այդ ունեցվածքը, սակայն 1923-ի հատուկ օրենքով վերջնականապես յուրացվեց:

20-ականների սկզբներին մոտավորապես նույն ճակատագրին է արժանացել Հունաստանի հետ ձեռք բերված համաձայնությամբ փոխանակման ենթարկված հույների, իսկ 30-ականներին՝ հրեաների ունեցվածքը: Այս ամենին հետեւել է 1942-ի «ունեցվածքի հարկը», ապա նաեւ 1955-ին Ստամբուլում կազմակերպված ջարդերը:

Թուրքիայում ազգային փոքրամասնությունների նկատմամբ բռնություն կիրառելու պարագայում խնդիրը սոսկ ունեզրկման կամ ջարդի դրսեւորումները չեն, այլ քարոզարշավները: Դրանցից է Ստամբուլի համալսարանի իրավաբանական ֆակուլտետի 1928-ի հունվարի 13-ի որոշումը, որը ենթադրում էր արգելել ազգային փոքրամասնություններին, բացի թուրքերենից, այլ լեզվի օգտագործումը: Այդ որոշումն այնուհետեւ վերածվում է քարոզարշավի, եւ Ստամբուլի տարբեր վայրերում ի հայս են գալիս «Քաղաքացի, թուրքերեն խոսի՛ր» ցուցապաստառներ, մակագրությունը դառնում է կարգախոս, իսկ չենթարկվողները ձերբակալվում են:

Այլ կերպ, հակառակ Լոզանի պայմանագրով ստանձնած պարտավորություններին, Թուրքիան հալածել, ունեզրկել, կոտորել է ազգային փոքրամասնություններին՝ ոտնահարելով նրանց մայրենի լեզվով խոսելու իրավունքը: Էրդողանի կառավարության հրամանագիրը թերեւս առաջին դեպքն է, երբ հալածելու, ունեզրկելու եւ կոտորելու փոխարեն առգրավված կալվածքները վերադարձնելու հարց է բարձրացնում, թերեւս դրանով էլ ոգեւորում է ազգային փոքրամասնություններին:

Ինչ վերաբերում է պետքարտուղար Քլինթոնի ողջույնին, չի բացառվում, որ դա կալվածքների վերադարձման հարցում Էրդողանի կառավարությանը խրախուսելու նպատակ հետապնդի, իսկ Էրդողանը օգոստոսի 27-ին ԱՄՆ պետքարտուղարության կրոնական ազատությունների մասին զեկուցագրի հրապարակումից առաջ ուժի մեջ մտած հրամանագրով ժեստ անի ոչ այնքան Թուրքիայի ազգային փոքրամասնություններին, որքան ԱՄՆ-ի պետքարտուղարությանը: Այդ դեպքում արդեն փոքրամասնությունները հավասարապես միջոց են դառնում ինչպես Թուրքիայի վարչապետի, այնպես էլ ԱՄՆ պետքարտուղարի համար, որոնց որպես միջոց օգտագործելու հնարավորություն է տալիս հրամանագիրը:

**ԱՄՆ-ԱՀԱԲԵԿՉԱԿԱՆ ԽՄԲԵՐ**

# Աֆրիկյան ահաբեկչական խմբավորումներն ընդդեմ ԱՄՆ-ի

*Գեներալ Հեմի հայտարարությունը*



ԱՄՆ Զու աֆրիկյան հրամանատարության ղեկավար, գեներալ Քարտեր Հեմը հայտարարել է, որ Աֆրիկայի 3 խոշորագույն ահաբեկչական խմբավորումները սերտացնում են կապերը ԱՄՆ-ի դեմ ահաբեկչություններ կազմակերպելու համար:

Գեներալի խոսքերով՝ «Իսլամական Մաղրիբի երկրների Ալ Ղաիդան», Սոմալիի «Աշ Շաբաբը» եւ Նիգերիայի «Բոկո Խարամը» համատեղ «նշանակալի վտանգ» են ներկայացնում ոչ միայն տարածաշրջանի, այլեւ Միացյալ Նահանգների համար:

«Նրանք հստակորեն եւ հրապարակայնորեն արտահայտել են արեւմուտքցիների եւ հատկապես ԱՄՆ քաղաքացիների վրա հարձակվելու մտադրությունը», ասել է Հեմը NBC հեռուստաալիքի եթերում:

«Էլ ավելի տագնապալի է, որ տվյալ խմբավորումներն իրենց գործողությունների համակարգման ուղիներ են որոնում», ընդգծել է գեներալը:

Հեմը մտահոգություն է արտահայտել, որ Լիբիայի ռազմական պահեստների զենքի մի մասը (մասնավորապես շարժական զենիթահրթիռային համալիրները) կարող է հայտնվել ահաբեկիչների ձեռքին:

# Աբբասը նշեց բանակցությունները վերսկսելու նախապայմանները

*Պաղեստինի անկախացումը ձեռնտու չէ «Համաս»-ին*

Պաղեստինյան ինքնավարության ղեկավար Մահմուդ Աբբասը իր ավագ օգնական Նիմեր Համմադի միջոցով հրապարակել է այն երկու նախապայմանները, որոնցից թեկուզ մեկի կատարման դեպքում ինքը պատրաստ կլինի վերսկսել բանակցություններն Իսրայելի հետ: Այդ մասին հաղորդում է «Ջերուսալեմ փոստ» թերթը:

Համմադի խոսքերով՝ առաջին պայմանը Այսրհորդանանում հրեական ավանների շինարարության լիակատար սառեցումն է, երկրորդը՝ Պաղեստինի պետությունը 1967-ի սահմաններով ճանաչելու Իսրայելի պատրաստակամության արտահայտումը՝ տարածքների համաձայնեցված փոխանակման պայմաններում:

Համմադը պարզաբանել է, որ լավագույնը կլիներ Իսրայելի կողմից երկու նախապայմանների կատարումը, «քանի որ դրանք փոխկապակցված են», բայց նույնիսկ մեկի կատարումն էլ ուղի կհարթեր երկխոսության համար: Դրա հետ մեկտեղ նա նշել է, որ Իսրայելի վարչապետ Բենիամին Նաթանյահուն այդ երկրի նախագահ Շիմոն Պերեսի հետ խոսակցության ժամանակ արդեն հրաժարվել է թեկուզ մեկ զիջում անել պաղեստինցիներին:

Ավելի վաղ պաղեստինցիները ընդհատել էին բանակցությունները, բողոքելով իրենց հողերում հրեական ավանների շինարարության դեմ: Ի պատասխան՝ Իսրայելը Աբբասին եւ նրա զինակիցներին մեղադրել էր հակամարտության խաղաղ լուծման որոնումից հրաժարվելու մեջ եւ արագացրել էր շինարարությունը:

Դրանից հետո Պաղեստինյան ինքնավարության ղեկավարները ՄԱԿ-ին էին դիմել 1967-ի սահմաններով Պաղեստինի պետության անկախությունը ճանաչելու խնդրանքով: Արդեն հայտնի է, որ խնդրանքը պաշտոնապես ՄԱԿ-ի Ընդհանուր ժողովին է ներկայացվելու սեպտեմբերի 20-ին:

Ինչ վերաբերում է «Համաս» արմատական շարժմանը, դրա պաշտոնական ներկայացուցիչ Սալահ Բարդավիլը երեկ հայտարարել է, որ 1967-ի սահմաններով Պաղեստինի պետության անկախության ճանաչումը «վտանգ է պարունակում «Համասի» համար»: Այդ մասին հաղորդվում է «Եդիոտ Ահրոնոտ» թերթում:

Բարդավիլի խոսքերով՝ տվյալ քայլի գլխավոր բացասական հետեւանքը կդառնա Իսրայելի գոյության իրավունքի ճանաչումը: Նա ափսոսանք է հայտնել այն կապակցությամբ, որ Պաղեստինի ճանաչման ծրագիրը այն «բանակցությունների շարունակությունն է», որոնք մերժում է «Համասը»:

# «Անորոշ սեռ» ավստրալական անձնագրերում

Ավստրալիայի քաղաքացիները հնարավորություն են ստացել իրենց անձնագրերում նշելու ոչ միայն արական կամ իգական սեռը, այլեւ X կամ անորոշ սեռը: Օրենսդրական այս ուղղումը կոչված է դյուրացնելու սեռափոխման որոշում ընդունած անձանց կյանքը, հաղորդում է ABC News հեռուստաալիքը:

Դաշնային կառավարութունը ընդգծել է, որ X նշում կարող են անել ինչպես սեռափոխված, այնպես էլ սեռափոխության պատրաստվող անձինք: Վերջիններս պարտավոր են ՆԳՆ ներկայացնել իրենց բուժող բժշկի նամակը:

Պատգամավոր **Լուիզա Պրատը** հայտարարել է, որ օրենսդրական նոր նորմերը թույլ կտան խուսափել թյուրիմացություններից, որոնք ծագում են, երբ արտերկիր մեկնելիս մարդիկ օդանավակայանում ներկայացնում են փաստաթղթեր, որոնց լուսանկարները տարբեր են անձնագրի լուսանկարից:

Ավստրալիայում անձնագիրը կարեւորությամբ երկրորդ փաստաթուղթն է ծննդյան վկայականից հետո: Այդ վկայականում համապատասխան փոփոխություններ կարելի է կատարել միայն սեռափոխության վիրահատությունից հետո:

ԱԶԳ

Մշակույթ

# «Գյուլբենկյան» սիմֆոնիկ նվագախմբի անդրանիկ համերգը Երեւանում



«Երեւանյան հեռանկարներ» 12-րդ երաժշտական միջազգային փառատոնի շրջանակներում Հայաստանի անկախության 20-ամյակին է նվիրվում «Գյուլբենկյան» սիմֆոնիկ նվագախմբի (գեղ.ղեկ եւ գլխ. դիրիժոր Լոուրենս Ֆոսթեր) անդրանիկ համերգը: Սեպտեմբերի 15-ին նվագախումբը «Արամ Խաչատրյան» համերգասրահում հնչեցրեց Խուլի Բրագա Սանտոսի սիմֆոնիետան լարայինների համար, Բեթհովենի դաշնամուրային թիվ 3 դո մինոր կոնցերտը, Դվորժակի թիվ 9 սիմֆոնիան եւ մի մինոր «Նոր աշխարհից» ստեղծագործությունները: Համերգն արժանացավ երաժշտասերների ջերմ ընդունելությանը: Այսօր Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում նվագախումբը հանդես կգա նոր ծրագրով՝ Արամ Խաչատրյանի ադաջիոն «Սպարտակ» բալետից, Բրամսի ջութակի կոնցերտը, Բեթհովենի սիմֆոնիա թիվ 7 լյա մաժոր ստեղծագործությունները, մենակատար՝ Արաբելլա Շտայնբախեր (ջութակ):



Երեկ ՀՀ մշակույթի նախարարությունում լրագրողների հետ հանդիպեցին փառատոնի գեղ.ղեկ Ստեփան Ռոստոմյանը, գլխ. մենեջեր Սոնա Հովհաննիսյանը, Գյուլբենկյան հիմնադրամի տնօրենների խորհրդի նախագահ Թերեզա Գուվեյան, երաժշտական բաժանմունքի ղեկավար Ռիստո Նյիմինյեն: Մշակույթի փոխնախարար **Արթուր Պողոսյանը** ներկայացրեց հյուրերին ու ողջունելով ասաց. «Հայաստանում այս երկու օրերին մի բացառիկ միջոցառում է տեղի ունենում ՀՀ նախագահի բարձր հովանու ներքո: Մեզ համար մեծ պատիվ է հյուրընկալել աշխարհահռչակ «Գյուլբենկյան» սիմֆոնիկ նվագախմբին, որը հայտնի է դասական երաժշտության նորովի մատուցման ասպարեզում»: Պետության, կառավարության կողմից հովանավորվող համերգները երաժշտասեր հասարակությանը նվեր է անկախության 20-ամյա հոբելյանի առթիվ: Պրն Ռոստոմյանը բացառիկ համարեց, որ «Գյուլբենկյան» նվագախումբը եւ հատկապես հիմնադրամի ղեկավարներն առաջին անգամ են ժամանում Հայաստան:

Տկն **Թերեզա Գուվեյանը** «Գյուլբենկյան» հիմնադրամի անունից ողջունեց ու ասաց. «Հպարտ ենք եւ ուրախ, որ առաջին անգամ Հայաստանում նվագելու ենք հայերի համար, այն էլ՝ այդքան կարեւոր հոբելյանի նախօրեին»: Այնուհետեւ տկն Գուվեյանը ներկայացրեց հիմնադրամի գործառույթները, նպատակները, որոնք ուղղված են նաեւ Հայաստանի ու Սփյուռքի հայերին աջակցելուն, նրանց կայացմանը եւ շփումներին: Պորտուգալիայում 60 տարի առաջ հիմնված «Գյուլբենկյան» հիմնադրամը միակն է, որն առանց կողմնակի ֆինանսական աջակցության, իր կայուն ֆինանսների շնորհիվ միակ սիմֆոնիկ նվագախումբը շրջագայում է աշխարհով մեկ ու համերգներ տալիս:

Նվագախումբը կազմված է 80 երաժիշտներից, նաեւ 100 հոգանոց երգչախմբից: Նվագախմբի երաժիշտները 12 տարբեր ազգությունների են, որոնց թվում են նաեւ 4 հայեր:

Հյուրերը շատ գոհ էին մնացել առաջին համերգի ընդունելությունից եւ հույս հայտնեցին, որ հաջորդ տարի գուցե նվագախումբը եւ երգչախումբը միասին գան Հայաստան: Պրն **Ռիստո Նյիմինյեն** ասաց, որ նվագախումբը հունիսից-սեպտեմբեր համերգաշարեր է անցկացնում, որի ընթացքում օրական 3-4 համերգ է տալիս: Աշնանը Լիսաբոնում նվագախումբը հատուկ համերգով հանդես կգա, որին հրավիրվել է աշխարհահռչակ ջութակահար Սերգեյ Խաչատրյանը:

«Գյուլբենկյան» հիմնադրամի ներկայացուցիչները երեկ հանդիպել են ԵՊՀ-ում հիմնադրամի մասնաճյուղի պատասխանատուի հետ եւ նոր ծրագրերի շուրջը պայմանավորվել:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

# «ՌեԱնիմանիա» փառատոնը շարունակվում է

**«ՌեԱնիմանիա» միջազգային III անիմացիոն փառատոնի մասին «Ազգ»-ը մանրամասն ներկայացրել է: Փառատոնի երկրորդ օրը սկսվեց «Հայկական ռետրոսպեկտիվ» ֆիլմերի ցուցադրությամբ: Ինչպես ասաց փառատոնի ծրագրերի ղեկավար Րաֆֆի Մովսիսյանը, «այս տարի հայկական ֆիլմերով հագեցած է ծրագիրը, որոնք հիմնականում արտամրցութային են, որովհետեւ Հայաստանում անիմացիան այնքան զարգացած չէ, որ մենք ունենանք մրցութային հագեցած ծրագիր»: Ուրախալի է, որ այս տարի փառատոնին ներկայացված պետական հովանավորությամբ նկարված ֆիլմերից զատ, ներկայացվել է մեկ անկախ ֆիլմ՝ հեղինակի ջանքերի շնորհիվ ստեղծված: «Նարեկացի» արվեստի միությունում երեկ երեկոյան ցուցադրվեցին վաղամեռիկ արվեստագետ Աբրահամ Սահակյանի հիշատակին նվիրված ֆիլմերը: Իր հոր վերջին աշխատանքի՝ «Արա Գեղեցիկ եւ Շամիրամ» ֆիլմի մասին խոսեց Հասմիկ Սահակյանը: «Այդ ֆիլմը նկարահանվել է Մոսկվայի կինոարտադրության հետ համագործակցության արդյունքում: Մուլտֆիլմի սյուժեն եւ իր մոտեցումը սյուժեին, հայրս փորձել է ներկայացնել հետաքրքրական լուծումներով»:**

**Իսկ այսօր ժամը 18.00-ին «ԹՈՒՄՈ» կենտրոնում կկայանա նկարիչ Նաիրա Մուրադյանի 50-ամյա հոբելյանին նվիրված երեկոն, որի ընթացքում կբացվի նաեւ նրա գեղանկարների ու էսքիզների ցուցահանդեսը: Հայկական ներկապնակում տեղ են գտել նաեւ 74ամյա ֆիլմերը, որոնց ցուցադրությունը կայանում է Սիրահարների այգում եւ «Նարեկացի» արվեստի միությունում: Յուրօրինակ է նաեւ երիտասարդ ռեժիսորի «Դեպի ներքեւ» դիպլոմային աշխատանքը, որը ստեղծվել է վերջերս ու տեղ է գտել 20-ամյա անկախ, անիմացիոն ֆիլմերի շարքում:**

Ս. Ս.

# Ջազմեն Տիգրան Համասյանի բարեգործական համերգները

**Արմատներով Գյումրիից, 24-ամյա ջազ երաժիշտ Տիգրան Համասյանն արդեն 7 տարի է, ինչ ապրում եւ ստեղծագործում է Ամերիկայում: Եվ ահա, Տիգրան Համասյանը Երեւանում է եւ սեպտեմբերի 17-ին Ստեփանակերտում, 18-ին՝ կրկին Երեւանում, 19-ին՝ Գյումրիում, 20-ին «Արամ Խաչատրյան» համերգասրահում համերգներ կտա, որոնցից գոյացած ողջ հասույթը սիրահոժար կտրամադրի «Փյունիկ» հաշմանդամների միությանը՝ կարիքները հոգալու:**

**Երեկ ջազ ակումբում Տիգրանը հանդիպեց լրագրողների հետ եւ նրանց համար նվագեց «Մի առակ» ալբոմից ստեղծագործություններ: «Ազգ»-ի հարցերին պատասխանեց. «Ես որոշել եմ, որ Հայաստանում իմ համերգները միայն բարեգործական են լինելու: Հայաստանում ջազ երաժիշտները շատ քիչ են, իսկ դասականը՝ շատ: Կարծում եմ, պատճառը քիչ շփումներն են, հետաքրքրության պակասը, նվազ հնարավորությունները»: Տիգրանը պատմում էր, որ փետրվարից Ամերիկայում սկսել է համերգաշրջանը, որը դեռ շարունակվելու է մինչեւ տարվա վերջը: Նա արդեն թողարկել է 4 ալբոմ, ձայնասկավառակներ: Նրա համերգները մշտապես տարբերվում են մեկը մյուսից:**

**«Իմ ստեղծագործություններում հիմք է հանդիսանում հայկական ժողովրդական երաժշտությունը, ասում էր երիտասարդ ջազ երաժիշտը, որից ես մեծ լիցք ու ոգեշնչում եմ ստանում: Ջազը ինձ համար դարձավ գործիք, որով ազատ կարող եմ իմ զգացումները արտահայտել: Իմ մի քանի հարյուր ստեղծագործություններն այժմ շատերն են կատարում:**

Ս. Ս.

ԷՋՄԻԱԾԻՆ

# Մակար Եկալյանի անվան երաժշտական դպրոցին փլուզում չի սպառնում

### *3 տարի անց խոստումը կատարվեց*



**2008-ի նոյեմբերի 12-ի համարում «Ազգ» օրաթերթը անդրադառնալով Էջմիածնի Մակար Եկմալյանի անվան երաժշտական դպրոցին, գրել էր, որ կրթօջախը կանգնած է փլուզման վտանգի առաջ: Երաժշտական դպրոցը կառուցվել էր 1945-ին, սակայն 1971-ից չի վերանորոգվել: Տանիքը կաթում էր, պատերը խոնավությունից փտել են, ճաքել: Մի քանի անգամ դպրոցն իր ուժերով թեթեւակի վերանորոգվել է, ներկել են դասարանները, սակայն դրանք կոսմետիկ հարդարանքներ են եղել: Դպրոցն արդեն 18 տարի չի ջեռուցվում: Վտանգված են երաժշտական գործիքների գոյությունը:**

**Հոդվածի հրապարակումից երկու օր անց քաղաքապետարանից ստացանք հաղորդագրություն՝ համաձայն որի քաղաքապետարանը միջոցառումներ է ձեռնարկել ապահովելու կրթօջախի ջեռուցումը: «Մակար Եկմալյանի անվան երաժշտական դպրոցի ճակատագիրը մեզ էլ է անհանգստացնում եւ մենք այժմ ուղիներ ենք որոնում դպրոցում շինարարական աշխատանքներ իրականացնելու համար: Իսկ ջեռուցման հետ կապված բոլոր խնդիրները կարելի է լուծված համարել: Ձմռանը կրթօջախը կջեռուցվի»:**

**Երեկ, Էջմիածնի քաղաքապետարանից «Ազգ»-ին տեղեկացրին, որ Էջմիածնի քաղաքապետարանի եւ կառավարության համատեղ ջանքերով վերանորոգվել է երաժշտական դպրոցը: Վերանորոգվել են տանիքը, պատուհանները, պատերը:**

**«Ազգ» օրաթերթը բազմիցս անդրադարձել էր նաեւ քաղաքի երկու կարեւոր մշակութային շենքերին՝ Հովհաննես Հովհաննիսյանի տուն-թանգարանին եւ Մշակույթի պալատին: Երկու օջախներն էլ կանգնած էին փլուզման եզրին: Կրկին կառավարության հետ համատեղ վերանորոգվել է Մշակույթի պալատի տանիքը, այժմ շինարարական աշխատանքներ են ընթանում շենքի վերանորոգման ուղղությամբ: Մոտ մեկ ամիս է ինչ սկսվել են նաեւ Հովհաննես Հովհաննիսյանի տուն-թանգարանի վերանորոգման աշխատանքները:**

Հ. Հ.

# Պողոս Պողոսյանի ֆոտոցուցահանդեսը



**Երեկ «Փարիզյան սուրճ» սրճարանում տեղի ունեցավ Պողոս Պողոսյանի ֆոտոցուցահանդեսը, որին ներկա էին բազում արվեստագետներ, լուսանկարիչներ եւ այլք: Ցուցահանդեսին ներկայացված էին Վիլիամ Սարոյանի լուսանկարները եւ բնապատկերներ: «Ազգ»-ի հետ զրույցում «Փարիզյան սուրճ» սրճարանների ցանցի տնօրեն Վալերի-Աշխեն Գործունյանն ասաց. «Հայաստանի կյանքում մշակույթը մեծ դեր ունի եւ «Փարիզյան սուրճը» խթանելով մշակութային միջոցառումների առկայությունը՝ միշտ պատրաստ է աջակցել: Հաճախակի հանդիպելով անճաշակության, նմանատիպ ցուցահանդեսները կկանխեն այն: Հուսով եմ ցուցահանդեսները շարունակական բնույթ կկրեն»:**

**Այն հարցին, թե այսօրվա լուսանկարչական մեր դպրոցում ում է համարում լավագույն արվեստագետ, վաստակավոր լուսանկարիչ Պողոս Պողոսյանն ասաց՝ Գագիկ Հարությունյանին եւ Մարտին Շահբազյանին: Հայկական լուսանկարչական դպրոցը համեմատելով այլ ազգերի դպրոցների հետ, նա պատասխանեց. «Գտնվում ենք բարձր դիրքերում, բոլորին հավասար՝ թե գեղանկարչությամբ, թե լուսանկարչությամբ»:**

ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՕՐՎԱ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ**

**Մրցույթի ծածկագիրը՝ ԼՂ/Դ-1/11**

«Հայաստան» համահայկական հիմնադրամը /ք. Երևան, Կառավարական 3-րդ շենք/, ս.թ. սեպտեմբերի 8-ին հայտարարված ԼՂՀ, Շուշի քաղաքի Եզնիկ Մոզյանի անվան մասնագիտական դպրոցի կառուցման աշխատանքների իրականացման մրցույթի հայտերի ընդունման վերջնաժամկետ է սահմանում մինչև ս. թ. հոկտեմբերի 17-ը, ժ. 11.00-ն:

***«Հայաստան» համահայկական հիմնադրամ***

# Աղասյանն առաջին ոսկե մեդալը պարգեւեց Հայաստանին

## *Եվրոպայի փոխչեմպիոն Ռուսաստանի կազմում*

Բուխարեստում ընթացող ծանրամարտի Եվրոպայի պատանեկան առաջնությունում վերջապես հայ ծանրորդը կանգնեց պատվո պատվանդանի առաջին աստիճանին: Եվրոպայի չեմպիոնի տիտղոսը նվաճեց մինչեւ 23 տարեկանների մրցաշարին մասնակցած Աղասի Աղասյանը (77 կգ): Նա երկամարտում ցույց տվեց 328 կգ (148+180) արդյունք: Նշենք, որ օգոստոսին Աղասին գերազանց ելույթ էր ունեցել Չինաստանում անցկացված համաշխարհային 26-րդ Ունիվերսիադայում՝ երկամարտի 337 կգ (151+186) արդյունքով հռչակվելով չեմպիոն: Աղասյանը համաշխարհային ուսանողական խաղերում հայ մարզիկներից ոսկե մեդալ նվաճած առաջին ծանրորդն է:




Բուխարեստում Եվրոպայի չեմպիոնի տիտղոսի համար բավականին թեժ մրցակցություն էր ծավալվել Աղասի Աղասյանի, ռուսաստանցի Ալեքսանդր Սաֆարյանի եւ ռումինացի Ադրիան Գիսոյուի միջեւ:

Պոկում վարժությունում Աղասին առաջին երկու մոտեցումները հաջող կատարեց՝ հաջորդաբար բարձրացնելով 145 եւ 148 կգ: 3-րդ մոտեցմամբ նա փորձեց բարձրացնել 150 կգ, սակայն անհաջողության մատնվեց: Այստեղ լավագույն արդյունքը ցույց տվեց ռուսաստանցի Ալեքսանդր Սաֆարյանը (152 կգ)՝ արժանանալով ոսկե մեդալի: Ռումինացի Գիսոյուն 150 կգ արդյունքով դարձավ արծաթե մեդալակիր, իսկ Աղասյանին բաժին հասավ բրոնզե մեդալը:

Եվրոպայի չեմպիոնի բախտը պետք է վճռեր հրում վարժությունը, որում հայ ծանրորդը վստահ ելույթ ունեցավ: Նա մրցումները սկսեց 177 կգ-ից, ապա 2-րդ մոտեցմամբ գլխավերեւում պահեց 180 կգ-անոց ծանրաձողը: Ալեքսանդր Սաֆարյանը բարձրացնելով 175 կգ, հաջորդ փորձերի ժամանակ ձախողվեց. 179 կգ-անոց ծանրաձողը չենթարկվեց նրան: Ռումինացի ծանրորդն էլ չկարողացավ բարձրացնել 180 կգ-ը ու բավարարվեց 176 կգ-ով: Այս անհաջողություններից հետո պարզ դարձավ, որ Աղասի Աղասյանն արդեն նվաճել է Եվրոպայի չեմպիոնի տիտղոսը, ուստի նա հրաժարվեց 3-րդ փորձից: Այսպիսով, Աղասին երկամարտի 328 կգ (148+180) արդյունքով ճանաչվեց լավագույնը՝ ոսկե մեդալ նվաճելով նաեւ հրում վարժությունում:

Երկամարտի 327 կգ (152+175) արդյունքով 2-րդ տեղը գրավեց Ռուսաստանի դրոշի ներքո հանդես եկած Ալեքսանդր Սաֆարյանը: Նրանից մեկ կգ-ով հետ մնաց ռումինացի Ադրիան Գիսոյուն՝ 326 կգ (150+176):

Քաշային այս կարգում հայտավորված Մարտիկ Սիմոնյանը հանդես էր եկել B խմբում ու երկամարտում ցույց էր տվել 300 կգ (140+160) արդյունք: Դա B խմբում 2-րդ արդյունքն էր, իսկ ընդհանուր հաշվարկով նա գրավեց 9-րդ տեղը 14 ծանրորդների մրցավեճում:

Հայաստանի հավաքականի կազմում դեռեւս մրցահարթակ դուրս չեն եկել գերծանրքաշայիններ Գոռ Մինասյանը (մինչեւ 20 տարեկաններ) եւ Հայկ Հակոբյանը (մինչեւ 23 տարեկաններ), որոնք իրական հնարավորություններ ունեն պայքարելու Եվրոպայի չեմպիոնի տիտղոսի համար: Հուսանք, որ երկուսն էլ կարդարացնեն սպասելիքները:

# Չեմպիոնական գոտու նվաճումը մեծ խթան կլինի Գենադի Մարտիրոսյանի համար

Ինչպես տեղեկացրել ենք, սեպտեմբերի 25-ին Կրասնոդարում Գենադի Մարտիրոսյանը միջինքաշային կարգում WBO-ի վարկածով աշխարհի չեմպիոնի տիտղոսը կվիճարկի ռուսաստանցի Դմիտրի Պիրոգի հետ: Մենամարտից առաջ հայ բռնցքամարտիկը նշել է այն 3 կարեւոր հանգամանքները, որոնք իր համար խթան են լրջորեն նախապատրաստվելու այդ մրցավեճին:



«Առաջինը մենամարտի կարգավիճակն է: Նպատակս չեմպիոնական գոտու նվաճումն է: Ամբողջ կյանքում սպասել եմ այդ պահին, երազել, որ մի օր կվիճարկեմ չեմպիոնի տիտղոսը: Եվ ահա ցանկության իրականացումը մոտ է: Նման մենամարտ անցկացնելը ցանկացած մարզիկի համար արդեն մեծ նվաճում է: Երկրորդ տեղում ֆինանսական գործոնն է: Նման մենամարտերում հոնորարն ավելի մեծ է, ինչը չի կարելի պակաս կարեւոր հանգամանք համարել: Եվ երրորդը՝ հանրաճանաչ դառնալն է, որին կնպաստի աշխարհի չեմպիոնի տիտղոսի նվաճումը: Ուստի ամեն առավոտ զարթնելով, տեսնում եմ մարզադահլիճ, որպեսզի լավ պատրաստվեմ ու ամեն ինչ անեմ չեմպիոնի տիտղոսը նվաճելու համար», նշել է Գենադի Մարտիրոսյանը:

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՆԵՐՔՈՀԻՇՅԱԼ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ**

| հ/հ | Գույքի հասցեն (գտնվելու վայրը) | Գույքի մակերեսը | Գույքի օգտագործման նպատակը | Վարձակալության տրամադրման ժամկետը | Պարտադիր պայման | Մեկնարկային գինը (վարձավճարի չափը 1 ամսվա համար) |
|---|---|---|---|---|---|---|
| *Աճուրդով վարձակալության տրամադրվող գույք* | | | | | | |
| 1. | Վարդանանց փող. հ.18/4 | 210.13 | ստորգետնյա անցման հատվածներ | 10 տարի | Աճուրդի հաղթողը պարտավոր է ապահովել ստորգետնյա անցման բարեկարգումն ամբողջ մակերեսով | 237.0 հազ. դրամ |
| 2. | Բուզանդի 1/3, 6-րդ հարկ | 53.7 | հասարակական | 10 տարի | - | 53.7 հազ. դրամ |

Աճուրդին կարող են մասնակցել իրավաբանական եւ ֆիզիկական այն անձինք, ովքեր Երեւան համայնքի բյուջեի նկատմամբ օրենքով սահմանված կարգով ֆինանսական պարտավորություններ չունեն:

Աճուրդին մասնակցել ցանկացող անձինք աճուրդի կազմակերպման եւ անցկացման ընթացակարգին կարող են ծանոթանալ Երեւանի քաղաքապետարանում, ինչպես նաեւ Երեւանի քաղաքապետարանի ինտերնետային կայքում՝ **WWW.YEREVAN.AM**:

Աճուրդի պայմանների մանրամասներին, պայմանագրի տիպային օրինակին ծանոթանալու ու հայտ ներկայացնելու համար դիմել Երեւանի քաղաքապետարան (Արգիշտի 1, մուտքը աշտարակի կողմից, 2-րդ հարկ, հեռ. 514173):

Աճուրդին մասնակցել ցանկացողները հայտին կից ներկայացնում են տեղական վճարի՝ 10000 դրամ եւ մեկնարկային գնի 5%-ի չափով նախավճարի վճարման անդորրագրերը:

Աճուրդը կայանալու է 2011թ հոկտեմբերի 3-ին ժամը16-ին, ք. Երեւան, Արգիշտի 1 հասցեում:

Հայտերն ընդունվում են աշխատանքային օրերին՝ մինչեւ 2011թ հոկտեմբերի 3-ը, ժամը 14-ն:

***ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ***

ԸՄԲՇԱՄԱՐՏ

# Եվ մեդալ, եւ օլիմպիական ուղեգիր

**Հունահռոմեական ոճի ըմբշամարտի աշխարհի առաջնության վերջին օրը վերջապես հաջողություն բերեց Հայաստանի հավաքականին: Մինչեւ 74 կգ քաշայինների մրցավեճում Արսեն Ջուլֆալակյանը դարձավ բրոնզե մրցանակակիր ու նվաճեց Լոնդոնի օլիմպիադայի ուղեգիր: Հրաձիգ Նորայր Բախտամյանից հետո Ջուլֆալակյանը դարձավ օլիմպիական ուղեգիր նվաճած հայ 2-րդ մարզիկը:**

**Արսենը հաջորդաբար հաղթելով իտալացի Սավերիո Չարամուզիին եւ ուկրաինացի Վլադիմիր Շացկիխին, 3-րդ գոտեմարտում մրցեց թուրք Սեբի Սելչուկի հետ: Անցյալ տարի Հունգարիայում Ջուլֆալակյանը պարտվել էր նրան: Այս անգամ էլ չհաջողվեց ռեւանշի հասնել: Թուրք ըմբիշը հասավ եզրափակիչ, որտեղ չեմպիոնի տիտղոսը զիջեց ռուսաստանցի Ռոման Վլասովին: Իսկ Արսենը հնարավորություն ստացավ մասնակցելու բրոնզե մեդալի համար մրցավեճին:**

**Վճռորոշ գոտեմարտերում հայ ըմբիշն իրեն գերազանց դրսեւորեց: Հաջորդաբար հաղթելով հույն Պետրոս Մանոյլիդիսին, Սլովենիայի ներկայացուցիչ Յուրե Կուհարին եւ ղազախ Ասխաթ Դիլմուխամեդովին, Ջուլֆալակյանը դարձավ բրոնզե մրցանակակիր: Դա մեր հունահռոմեական ոճի ըմբիշների նվաճած միակ մեդալն էր Ստամբուլում, ինչը բավարար համարել չի կարելի:**

**Այսօր Ստամբուլում իրենց մրցավեճը կսկսեն ազատոճային ըմբիշները: Վերջին շրջանում այս ոճում հայ ըմբիշներն անհաջող ելույթներ են ունենում: Գուցե աշխարհի առաջնությունում նրանք կարողանան իրենց արդարացնել: Մրցագորգ դուրս կգան Միհրան Ջաբուրյանը (55 կգ), Նարեկ Սանոյանը (60 կգ), Դավիթ Սաֆարյանը (66 կգ), Մուսա Մուրթազալիեւը (74 կգ), Հաջիմուրադ Մուհամեդովը (84 կգ), Հարություն Ենոքյանը (96 կգ) եւ գերծանրքաշային Ռուսլան Բասիեւը:**




# Պետրոսյանն ու Գաբուզյանը շարունակեցին հաղթարշավը

**Ալբենայում ընթացող շախմատի Եվրոպայի պատանեկան առաջնության 4-րդ տուրում Մանուել Պետրոսյանն ու Հովհաննես Գաբուզյանը շարունակեցին հաղթարշավը՝ տոնելով 4-րդ անընդմեջ հաղթանակները: Մինչեւ 14 տարեկանների մրցաշարի մասնակից Մանուելը սեւերով հաղթեց ռուսաստանցի Դավիթ Պառավյանին: Նա ռուսաստանցի Միխայիլ Անտիպովի եւ թուրք Մուհամեդ Դաստանի հետ 4 միավորով գլխավորում է աղյուսակը: 3,5 միավոր ունի Տիգրան Հարությունյանը, որը ոչ-ոքի խաղաց Կրժիժտոֆ Դուդայի հետ: 3 միավոր է վաստակել Կարեն Հովհաննիսյանը, որը պարտության մատնեց Նենադ Թոդորովիչին:**

**Հովհաննես Գաբուզյանը ռուսաստանցի Գլեբ Ապրիշկոյի եւ Դավիթ Անտոնի հետ 4 միավորով գլխավորում է աղյուսակը: Հերթական հաղթանակը նա տոնեց Կլեմենտի Սուչեւի նկատմամբ: 3,5 միավորով 5-րդ տեղում է ընթանում Կարեն Գրիգորյանը, որն առավելության հասավ Գարի Գիրոյանի նկատմամբ:**

**Մինչեւ 18 տարեկան պատանիների մրցաշարում Սամվել Տեր-Սահակյանը 2-րդ հաղթանակը տոնեց՝ առավելության հասնելով Ալեքսանդր Դրագոմիրեցի նկատմաբ: Սամվելը վաստակել է 3 միավոր եւ ընթանում է 11-րդ տեղում: 4-ական միավորով առաջատարներն են շվեդ Նիլս Գրանդելիուսը եւ վրացի Զուրաբ Ջավախաձեն: Հայկ Վարդանյանն ունի 2 միավոր: Նա ոչ-ոքի խաղաց Մաթեյ Բլազեկայի հետ:**

**Մինչեւ 12 տարեկանների մրցաշարում հաջող է խաղում Միքայել Մկրտչյանը, որն ունի 3,5 միավոր: Նա հաղթեց Ֆլորիան Մեսարոսին: 3 միավոր է վաստակել Հայկ Մարտիրոսյանը:**

**Հայ շախմատիստներից առավել հաջող են հանդես գալիս Մանե Ադամյանը, Անի Դավթյանը եւ Արփինե Գրիգորյանը, որոնք մասնակցում են մինչեւ 10 տարեկանների մրցաշարին եւ վաստակել են 3-ական միավոր: Երեքն էլ 4-րդ տուրում հաղթեցին իրենց մրցակիցներին:**

# Դանիելյանը 2-րդ հաղթանակը տոնեց

Շախմատի Գրան պրիի մրցաշարի 8-րդ տուրում Էլինա Դանիելյանը 87-րդ քայլին սեւերով հաղթեց Բաթյույագ Մոնգոնտուլին: Դա Էլինայի 2-րդ հաղթանակն էր մրցաշարում: Դանիելյանը 3 միավորով 9-րդ տեղում է:

8-րդ տուրից հետո միանձնյա առաջատար դարձավ աշխարհի ներկայիս չեմպիոնուհի Հոու Յիֆանը, որը սպիտակներով հաղթեց Վիտորիա Չմիլիտեին: Յիֆանը վաստակեց 6 միավոր: Իսկ ահա մյուս առաջատար Ժուան Լուֆեյը պարտվեց Չժաո Սյուեին: Վերջինս 5,5 միավորով շրջանցեց Լուֆեյին, որն ունի 5 միավոր: Նույնքան միավոր վաստակեց նաեւ Աննա Մուզիչուկը՝ հաշտություն կնքելով Տան Չժունիի հետ: Վերջինս Յու Վենցզյունի հետ ունի 4,5 միավոր: Վենցզյունը պարտության մատնեց Բեթյուլ Յիլդիզին: Չժու Չեն-Կովալեւսկայա պարտիան ավարտվեց ոչ-ոքի:

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

ZVARTNOTS

ARMENIA INTERNATIONAL AIRPORTS

# Նոր ուղևորային համալիր



## Հայաստանը վերելք է ապրում

www.zvartnots.aero


Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝15.9.2011, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: